

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԻՒՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Կրետական խնդիրը կը մնայ հոն ուր որ էր ասորի մը առաջ: Չարը Յունաստանի Երկիրու իշխանը ապրամաք կղզիին կառավարչութեան ընտրելի ներկայացնելէ յետոյ պարտութեամբ ետ քաշուեցաւ: Արտաքին պաշտօնատաներու հետ յարաբերութիւն ունեցող կարգ մը թերթեր հաւաստեցին թէ Ռուսիա ինքնամփոփման շրջանի մը մէջ կը գտնուի. քիչ ատենէն չիլլէն կ'ելլէ եւան ատեն ձայնը լսելի ընել պիտի տայ ոչ միայն Կրետէի այլ եւ Հայաստանի համար ալ: Այս միջամտութենէն լուսագոյն ապագայ մը կը յուսացուի թէ՛ Կրետէի, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ ամբողջ Թիւրքիոյ համար, ասիականին ալ, եւրոպականին ալ:

Ռուսիոյ վերապրուած այս խորհուրդները այնքան հըմայիչ են որ անոր հաւատարմութիւնը սրամաղիւր գտնուողները եթէ երազատես իսկ հոչակուին չենք կարծեր որ սրտնեղութեան իրաւունքը ունենան: Սակայն արեւելքի քաղաքականութիւնը կը նմանի վիճակահանութեան մը որմէ մեծկակ թիւը շահելու երազը անպատճառ կատարեալ անուսուցիչն պէտք չէ համարիլ:

Արեւելքի համար այդ փայլուն հեռավարակերը մեր աչքին շողշողացնողները ուսուցիչութեան շահերու համարաշի փառնակցութեան մը անտիքէն շլացած կը բարբառին: Վերջին երեք տարուան վէպերը որքան որ ալ շատերը յոռետեսութեան մղած ըլլան բայց եւ այնպէս արեւելեան շահագործութեան այս նոր ծանուցումը ուշադրաւ համարելու պատճառներ ալ կրնան գտնուիլ: «Եւրոպան ո՛չ զիտցաւ կանխատեսել արեւելեան վէպերը եւ ո՛չ ալ անոնց ուղղութիւն տալ, այլ միշտ յանկարծակիի եկաւ» կ'ըսեն վերջին տարիներու քաղաքականութիւնը ուսումնասիրողները: Ու նկատելի է որ ամենէն աւելի խաբուողը Ռուսիան եղաւ, «Թիւրքիոյ գործերուն մասնաբաժնի վարպետ Ռուսիան»: Չարը նմանեցաւ հին կատակերգութեան մը համբաւաւոր փաստաբանին որ Գատի մը մէջ իր պաշտպանած հովիւը ազատելու համար անոր հրահանգ կուտայ գատաւորին ամէն հարցումներուն պատասխանել մայելով, «մէ՛, մէ՛»: Վճիւր ամբաստանեալին նպատակաւոր կ'արձակուի, բայց երբ փաստաբանը իր վարձքը կը պահանջէ հովիւէն, ինքն ալ «մէ՛, մէ՛» պատասխանը միայն կը լսէ: Հայկական կոտորածներու ամբիւ Ռուսիա սուլթանը փրկելէ յետոյ երբ իր մատուցած ծառայութեան փոխարինութիւնը պահանջեց, «մէ՛, մէ՛» պատասխանը լսեց: Ռուսիա բացառութեամբ՝ սուլթանը ձարը համառօտեց, Պ. Լավիս խօսելով Գերմանիոյ արեւելեան դերին վրայ կ'ըսէ.

«Սոյն կարեւոր յօդուածներուն մէջ զոր «Նոր Կեանք»ը համառօտեց, Պ. Լավիս խօսելով Գերմանիոյ արեւելեան դերին վրայ կ'ըսէ.

«Սոյն միջոցին որ Հայաստանի գործերը երեք պէտքերու շրջաններու ձեռքն էին, Գերմանիա մեկուսացեալ մնաց: Համաձայնութեան առաջին օրերը ինքն ալ միտ «պետութիւններուն հետ սնուցեց սուլթանէն կարեւոր բարենորոգումներ ստանալու համար. բայց կամաց կամաց, «տեսնելով անհամաձայնութիւնը եւ խառնաշփոթութիւնը, «որոշեց ընդհատել մէջ մնալով հանդերձ ինքնուրոյն քաղաքականութեան հետեւիլ: Եւ որովհետեւ ինք կամք ունեցող եւ այդ կամքին համաձայն գործող միակ պէտքութիւնն էր, ուստի կացութեան տէրը եղաւ ու վարեց «վէպերը:

«Գերմանական քաղաքականութեան նպատակը եղաւ «օսմանեան կայսրութեան պահպանումը եւ մինչեւ իսկ «անոր վերանորոգումը: Ինչո՞ւ: Շարժառիթները բազմաթիւ են: ՄԷկի ձգեց Վիլհելմ կայսեր վերադրուած «անձնական շարժառիթները: Այս տեսակ մեկնութիւնները շատ են թաղարկան են, ու նաեւ պղտիկ շարժառիթները սովորաբար քաղաքական լուրջ պատճառներուն «օժանդակութիւն են միայն:

«Վիլհելմ կայսրը կարգապահութեան եւ իշխանութեան բնական պաշտպանն է: Յեղափոխական ո՛ր եւ է «յուզում անհաճոյ է իրեն. անկախութեան ըզձացող ազգայնութեան մը ո՛ր եւ է շարժումը կ'ատէ: Սոյն վարդապետութիւնը թէ ժողովուրդները կամ ժողովուրդներու «հատուածները իրենք իրենց վիճակը վճարելու իրաւունքը ունին, այս ֆրանսական վարդապետութիւնը Վիլհելմ կայսրէն աւելի հաստատամիտ հակառակորդ չունի. առիկա յայտնի է եւ գիտենք թէ ինչո՞ւ (*): Վիլհելմ կայսեր վաւանանքն է թէ իշխանութիւնը Աստուծոյ է, «թէ ամէն ուժ օրինաւոր է, եւ թէ ուժն է որ կը յօրինէ իրաւունքը: Ու նաեւ ամբողջ Գերմանիա պաշտօն կը «մատուցանէ ուժին. խիստ ու զօրեղ երկիր մըն է, վայրազ «կորովով:

(* Ալգաս-Լորէնի ինդրին պատճառաւ նամանակաւ: Մ. Խ.

« Արեւելեան խնդրին մէջ, այլ միշտ յուզեալ ու եր-
 « բեք գոհ չմտացող ազգայնութիւնները, այլ խոստարար
 « պզտիկ երկիրները սրունք իրենց սենեցած իրաւունքէն
 « — իրենց այնքան պզտիկ ըլլալով — աւելի աղմուկ կը
 « հանեն, արեւելեան այս ամբողջ խառնաշփոթ կացու-
 « թիւնը Գերմանիոյ կայսեր միտքը նպաստաւոր կը տրա-
 « մապրէ Փասիշահին համար: Եթէ օսմանեան կայսրու-
 « թեան հաշուէյարգարութիւնը ընել հարկ ըլլար, եթէ
 « Եւրոպան միաձայնութեամբ այս բանս ուզէր, անշուշտ
 « Վիլհելմ կայսրը Աւստրիոյ փառասիրութիւններուն զօ-
 « րակի պիտի ըլլար: Աւստրիան գերմանական մարմնէն
 « տարածերէնով Բրուսիա գայն դէպի արեւելք նետեց.
 « Իր շահն է Աւստրիան արեւելեան պետութիւն մը ընել,
 « կորուստներուն իբր փոխարինութիւն, եւ զբաղում մը իր
 « նոր ճակատագրովը: Եւ որովհետեւ Աւստրիա Գերմա-
 « նիոյ միացած է սերտ, եւ հաւանօրէն երկարատեւ նիզա-
 « կակցութեամբ, կրնայ Գերմանիա սեպուիլ, Գերմանիա
 « մը որ Դանուբի վրայ պաշտպանողական, եւ ի հարկին
 « յարձակողական, պահպանի պաշտօնը կը կատարէ,
 « վասն զի ո՛չ Աւստրիա, ո՛չ Գերմանիա կրնան թոյլատրել
 « որ գերման Դանուբի բերանները ո՛ր է պետութեան ձեռ-
 « քը անցնին: Բայց պիտաւոր շահը Գերմանիոյ, որ հողա-
 « յին ցանկութիւն չունի Արեւելքի մէջ, թիւրքիոյ երկա-
 « րասեւութիւնն է, որպէս զի ուրիշ պետութիւն մը անոր
 « կողմուկուն մէջ իր ուժերուն աճեցումը չգտնէ:

« Գերմանիոյ կայսրը ուրեմն օսմանեան կայսեր եթէ
 « ոչ նիզակակիցը, գէթ բարեկամն է: Այս մտերմութիւնը
 « արծարծուն կը պահուի այն իրողութեամբ որ գերման
 « սպանները օսմանեան բանակին մարզիչներն են: Գերմա-
 « նիոյ կայսեր, իր բանակին, իր ժողովրդին համար թըր-
 « քական բանակը գերման բանակէն սերած է. գերման
 « կայսրը, գերման ժողովուրդը վերջին հելլենութիւրք
 « պատերազմին մէջ անձնական ակներբե խնդութեամբ
 « դիտեցին թիւրքերուն ըրածները: Յունաստանի ջախջա-
 « խումը գերմանական զորք մըն է թիւրք բազուկներով
 « կատարուած:

« Գերմանիոյ կայսրը իր ժողովրդին սնտեսական շա-
 « հերը նշանաւոր խելացութեամբ կ'ըմբռնէ ու կը ծառայէ
 « անոնց: Իրաւամբ հպարտ է առեւտրական ու ճարտարա-
 « գործական բարգաւաճումին համար, ժամանակակից ար-
 « տայայտութիւն գերմանական զօրութեան: Արդ, ուու-
 « թանը գէնքի եւ ազամութեքի գնող է. պարզեւիչն է
 « մենաշնորհներու եւ գործերու, նաւահանգիստներու, եր-
 « կաթնուղիներու, ճամբաներու եւ թերեւս օր մըն ալ գաղ-
 « թականութեան համար հողերու. այս վեհապետին բա-
 « րեկամութիւնը գանձարան մըն է ուրկէ Գերմանիա եր-
 « բեմն բան մը չէր առներ, հիմա հոնկէ լիաբուսն կը
 « վերցնէ:

« Գերմանիոյ կայսրը Անգլիոյ դէմ կուռի ձեռնարկած է
 « սնտեսական գերիշխանութեան համար: Չի սիրեր Անգ-
 « լիան, զուցէ գայն կ'ատէ ալ: Իր եռանդուն երեւակայու-
 « թիւնը կը թափառի ծովերուն վրայ. հեռաւոր վայրեր
 « հաստատութիւններ կ'երսդէ. կ'ուզէ զօրեղ նաւատորմ
 « սը սնենալ, եւ Ազգային ժողովին զիմապրութիւնը կը

« բարկացնէ զինքը ու կը նեղէ: Իր մեծ հայրն էր որ հիմ-
 « նեց Գերմանիոյ ցամաքային զօրութիւնը. ինքն ալ իր
 « պաշտօնը կը համարի Գերմանիոյ ծովային եւ գաղթա-
 « յին զօրութիւնը հաստատել: Արգելքը Անգլիան է որ
 « աշխարհիս վրայ շատ սեղ կը բռնէ. Վիլհելմ կայսրը
 « չուզեր որ այդ սեղը աւելի ընդարձակի: Արեւելեան
 « խնդրին մէջ բնականաբար անգլիական քաղաքականու-
 « թեան բարբառի հակառակ ընթացքի պիտի հետեւեր:
 « Իր ընթացքին մեկնութիւններէն մէկն ալ աս է. պզտիկ
 « ձգել Անգլիան:

« Ուրիշ պատճառներ ալ կան. Կ. Պոլիս գերմանա-
 « կան այս տեսակ թեարկութիւնը աշխարհիս մէջ գերմա-
 « նական զօրութեան ահապին ընդարձակում մըն է: Մին-
 « չեւ Պերլինի գաշնազիրը Կ. Պոլսոյ մէջ գերագոյն ազ-
 « րեցութեան տէրը մին էր այն երեք պետութիւններէն ու-
 « թոնք Արեւելքի մէջ ամենէն աւելի շահ ունէին. Ֆրանսա,
 « Անգլիա, Ռուսիա: Այդ գաշնազրէն ետքը սկսած էր
 « գերմանական ազդեցութիւնը. տասը տարի աճած էր.
 « յետոյ Կրկնակ-նիզակակցութեան կազմուելուն վրայ քիչ
 « մը տկարացած: Երեք տարի առաջ Գերմանիոյ դեսպանը
 « Կ. Պոլիս գրեթէ նշանակութիւն չունէր. իր առաջին
 « թարգմանը, այսօր այնքան ի տես, այնքան գործունեայ,
 « ան ատեն բառախաղեր կ'ընէր ու թուղթ կը խաղար: Այ-
 « սօր նորէն, ամէն ատենէ աւելի, գերմանական ազդե-
 « ցութիւնն է որ կը տիրէ թիւրքիա: Ռուսական դեսպանը
 « այլ եւս առաջնակարգ սեղը չի գրաւեր, ա՛լ պալատը ի-
 « բն մտիկ ընող չի կայ. պէտք է որ Ռուսիոյ կայսրը ան-
 « ձամբ միջամտէ սուլթանին մօտ: Թեաւ իր պատերազ-
 « մական պաշտերուն վրայ թիւրք զինուորները Գերմանիոյ
 « զինուորական կցորդին ձեռքերը կը պահէին. Կ. Պոլիս
 « հասարակ ժողովուրդը կը պաշտէ Գերմանացիները:
 « Թիւրքիա արդեամբ կցուած է Երբեակ-նիզակակցու-
 « թեան դրութեան. Վիլհելմ կայսեր խաղին մէջ մեծազին
 « թուղթ մըն է. կայսրը կրնայ գայն գործածել Ռուսիոյ
 « դէմ կամ թեր, եւ այսպէս իր բարեկամութիւնը աւելի
 « ըզձալի ընծայել Բեզրպուրկ:»

Պ. Լավիսի այս ճշգրիտ տեսութիւնը յստակօրէն կը
 պարզէ Արեւելքի մէջ գերմանական ձգտումները: Ամենքս
 ալ կրնանք ըմբռնել թէ մեր ազգային շահերը հզօրապէս
 ենթարկուած են թիւրքիոյ նկատմամբ մեծ պետութեան
 մը խորհուրդներուն ազդեցութեանը. բայց երբ թիւրքիոյ
 համար խորհուրդներ տաժողը միայն մէկ պետութիւն մը
 չէ, ո՛րքան աշաւուրջ ուշադրութեամբ պարտաւոր ենք հե-
 տեւիլ իրարու հակառակող շահերու, եւ պէտք է ջանանք
 մենք ալ, առանց ինքնախաբէութեան, մեր շահերը ապա-
 հովել, օգտուելով պարագաներէն ու հանգամանքներէն
 զոր կը ստեղծեն երկու կամ երեք պետութեան ընդդի-
 մամարտ քաղաքականութիւնները:

Հիմա երկու պետութիւն կը հետամտին թեարկելու
 թիւրքիոյ վրայ, Գերմանիա եւ Ռուսիա. երկուքն ալ ի-
 բնեց շահերուն պաշտպանութեանը համար կ'ուզեն պաշտ-
 պանել օսմանեան կայսրութիւնը: Տարրական ճշմարտու-
 թիւն մըն է որ Ռուսիոյ շահերը թիւրքիոյ տկարացումին
 մէջ կը կայանան. թիւրքիոյ համար սուտական պաշտպա-

նութիւնը ուրիշ նպատակ չունի բայց եթէ այդ երկիրը ա-
րագաքայլ իր կորուստին մղելու միջոցները դիւրացնել-
օրինակ՝ հայկական ջարդերը: Գերմանիա թիւրքերոյ տըն-
տեսական եւ զինուորական բարդաւանովին մէջ կը վըն-
տոէ իր շահերը: Եւ որովհետեւ Վիլհելմ կայսրը ազա-
տական ձգտումներ չի տածիր եւ հողային գրաւումի խնր-
հուրդ չունի, ուստի եւ շատ հեշտութեամբ սուլթան Հա-
միտի յետահուութիւնը վայելեց եւ կը տիրապետէ անոր վը-
րայ: Ռեբմի Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ մենամարտ մը
կը մղուի թիւրքերոյ շուրջը, մինչեւ հիմա յաջողութիւնը
մնայութիւնաւ չի նկատուի:

Սխալած ըլլալ չենք կարծեր եթէ բանք որ սուլթան
Համիա հետզհետէ կը հասնի այն վիճակին սրուն մէջ կը
գտնուի Ապպաս փաշան, Եգիպտոսի անուանական խտի-
վը, որուն բուն տէրը Անգլիան է: Իրաւ է որ Գերմանիա
ո՛ր եւ է բնաւարութիւն չի գործադրեր սուլթանը իրեն հը-
պատակեցնելու համար, բայց սուլթանը ազէկ գիտէ որ
կըր Գերմանիոյ կայսրը իրմէն երես գարձնէ, իր գործը
լմնցած է. եւ որովհետեւ Վիլհելմ կայսրը սուլթանէն ո՛ր եւ
անձնական զոհողութիւն ալ չի պահանջեր, ուստի եւ իր
լուծն ալ շատ քաղցր է ու թեթեւ:

Ընդհանուր կերպով թիւրքերոյ ժողովուրդներն ալ,
կամ թէ անոնցմէ շատերը, վերջ ի վերջոյ սովոր ախտի չի
մնան գերմանական ազդեցութենէն, ինչպէս Եգիպտացի-
ները տօգոհ չին անգլիական վարչութենէն սրուն շնորհիւ
ժողովրդին վիճակը հետզհետէ պէտք լաւը կը փոխուի:
Խեղացի Գերմանիան շատ ազէկ գիտէ թէ թիւրքի բա-
րեկարգուելով միայն կրնայ տնտեսական բարեկաջող վի-
ճակի հասնիլ, եւ այդ կացութիւնը որքան աւելի բարգա-
ւած ըլլայ՝ Գերմանացիներն ալ այնքան աւելի ապրանք
կրնան ծախել թիւրքերոյ:

Թիւրքիա եւրոպացի պաշտօնատարներու ձեռքով մի-
այն կրնայ բարեկարգուիլ, եւ ահա Գերմանացիները քիչ
քիչ ստրեղծներն կը զետեղեն ամէն պաշտօնատներու
մէջ: Թիւրքիա անզգայապէս գերմանական նշանակի մը
կը վերածուի, ու պիտի գայ օր մը որ Գերմանացիները
թիւրքերոյ մէջ այնքան զօրեղ հաստատուած պիտի ըլլան
որքան Անգլիացիները Եգիպտոսի մէջ:

Այս վտանգին հանդէպ Ռուսիոյ վրդովումը շատ բը-
նական երեւոյթ է: Ամէն անգամ որ Գերմանիա քայլ մը
կը յառաջանայ թիւրքերոյ մէջ, Ռուսիա տասը քայլ ետ
մղուած կը համարուի. ու այսպէս դարաւոր խորհուրդներ,
ծրագիրներ կըս-ճամբան մնալու հարկադրուին գուցէ:
Բայց Ռուսիա կրնայ սիրայօժար տեղի տալ Գերմանիոյ
առջեւ եւ հրաժարիլ նպատակներէ որոնց իրականացումին
յարատեւութեամբ կը հետապնդի: Ռուսիոյ կողմէն այս-
պիտի ձեռնթափութիւն մը հաւանական չէ, եւ չի կրնար
ըլլալ: Ու ահա կրետական եւ հայկական խնդիրներուն
մէջ Ռուսիոյ ազդու միջամտութեան մը զրոյցները հրա-
պարակ կ'իլլին: Չարքը յաղթանակած էին Արեւելքի
մէջ՝ քրիստոնեաներու գաւիտն պաշտպան կանգնելով
թիւրքին դէմ. անկումը սկսաւ Ռուսիոյ համար այն օրէն
կըր ոչ միայն լքեց Հայերը եւ Յոյները այլ եւ անոնց թըշ-
նամիներուն միացաւ: Այժմ Ռուսիա թերեւ կը հասկնայ
թէ Լօպանովի իշխանը կարծուածին չափ մեծ քաղաքա-

զէտ մը չեղաւ, ու խոշորէկ սխալ մը գործեց հայկական
խնդրին մէջ: Ու երբ կը տեսնենք թէ Ֆրանսա եւ Անգլիա
եւ շատ տօգոհ են թիւրքերոյ մէջ Գերմանիոյ գերակշիռ
ազդեցութենէն, անհաւանական չի թուիր խոր քաղաքա-
կանութեան մը ծնունդը:

Առ այժմ չենք կրնար այդ քաղաքականութեան մեծ
գծերուն վրայ որոշ գաղափար մը կազմել, բայց տարու-
կոյս չի կայ թէ երեք պետութիւններն ալ եթէ ուզեն Գեր-
մանիոյ դէմ մարտնչիլ, պէտք է մեզի ձեռք անեն: Հայ-
կական խնդիրը սքանչելի կոտան է թիւրքերոյ մէջ գոր-
ծելու համար. հայ ժողովուրդը լաւագոյն տարրն է Պարս-
կային ծոցէն մինչեւ Միջերկրական հակադրման ծրա-
գիրներու յաջողութեան համար:

Այս հետապատկերը որ գեռ ազօտ իմն կը նշմարուի,
եթէ աւելի տեսանելի դառնայ, զգուշ մնանք շրջումէ:
Առանց ինքնախաբէութեան, առանց արկածախնդրութեան
մեր գործը զեկաւարել զիտնանք: Ապագան իստապիլ է,
ինչ որ ալ ըլլայ:

Չմոռնանք թէ քաղաքականութեան մէջ շատ բան
կրնայ փոխուիլ ու մենք հասած ենք վիճակի մը որ նորա-
նոր փորձառութիւնները ներելի չընեն: Մէջտեղ մնալէ
զուշանանք: Գերմանիա եւ Ռուսիա որ այսօր իրարու
հակառակ քաղաքականութեան մը կը հետեւին թիւրքերոյ
մէջ, կրնան մէկէն ի մէկ ալ համաձայնիլ: Այս կարծիքն
ալ կայ: Ետտ լուրջ ազդիւրներէ հրատարակուեցաւ թէ
Վիլհելմ Բ. 1896ի սեպտեմբերին Պրէսլաւի տեսակցու-
թեան մէջ Նիքոլա Բ.ին առաջարկած է նիզակապութիւն
մը որով երկու միացեալ կայսրութիւնները վարեն ամբողջ
Եւրոպան, պաշտպանելով հաստատուած քաղաքական ու
ընկերական կարգուսարքերը, լուցնելով տօգոհները ու
անփոփոխ պահեն Եւրոպայի արդի կացութիւնը:

Մաղթենք որ չըլլայ թէ երկու կայսրերը օր մը վի-
րապառնան այս ազխտութիւն տառաջարկին եւ զայն ընդունին
ու գործադրեն:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Զ Ա Ի Ա Կ Ը

Ահուրի ճայթումներով ամբողջ դիւզը կ'այրէր ձեան
սպիտակ տարածութեան մէջ, որ յափ մը տունները կը շըր-
ջապատէր:

Քամին որ միջոց մը հանդարտած էր հիւսա կը սուլէր՝
կրակին բոցերը պէտք կ'ապարազոյն երկինքը բարձրացնե-
լով:

Կարմիր լոյսը կը տարածուէր հեռուն հեռուն:

Թիւրք գորքերը բերանաբաց ապուշ գոհունակութեամբ
կը ծիծաղէին այս տեսարանին:

— Հայերը, ըսաւ մին, ալ բոյն պիտի չունենան:

Ու ամենքը միասին սկսան ինչպէս:

— Նայեցէ՛ք, պոռաց ուրիշ մըն ալ՝ ձերուկ մը պիտի չե-

լով որ չը կրնար փախչիլ կրակէն:
Խակոյն մէկ քանի զինուոր նայն կողմը վազելով խոշոր
խանձօղ մը վերցնելով զեանէն խեղճին պիտուն դարկին:
Ծերը ձեռքերը առաջ երկնցուց եւ կրակին մէջ տապալեցաւ:

—Ահա՛ կին մըն ալ, պոռաց ուրիշ մը:

—Անո՛ր ալ գործը լմնցուր, յարեց հրամանատարը:

Ա՛լ բան չէր մնացած: Աւարտած էր շարքը:

Քսանի չափ էին փախստականները որ ազատած էին, ու կը շտապէին գէպի լեռը՝ հովուն սաստկութիւնէն մղուած:

Գոյներնին նետած էր վախէն, ու դողալով, ցուրտին անզգայ, միշտ կը քալէին, կը քալէին: Իրենց չորս կողմը ձիւնի ահագին կոյտեր լերան պէս կը բարձրանային, ու փախչողներուն տխուր շուքը սեւ ուրուականներու պէս կը սահէր, կը սահէր, կը սահէր, ու կ'անհետանար: Ոտնաձայն անգամ չէր լսուեր, ու բերաննին կ'պսած, ձեռուրնին կուճեքներուն վրայ կ'ապած, խոշոր արցունքներ կ'աթեցնելով, ասպստան մը գանել կը փութային:

Ո՞ր կ'երթային: Ոչ ոք իրենցմէ կարող էր պատասխան մը գտնալ: Կ'երթային մինչեւ որ յոգնութիւնէ եւ ցուրտէն կիսամեռ իյնային:

Վարդենի, գիւղապետին նորհարս աղջիկը, իրենց տանը ախոտին մէջ պահուրեւած էր: Չէր կրնար գատուիլ երիտասարդ ամուսնոյն անկենդան մարմինէն:

Գծուարութեամբ մինչեւ հոն սարած էր զայն, թաղելու մտքով, ու հիմա երիտասարդին գէմքը կը դիտէր խելագարի նման:

Մանկամարդ կնոջը քով երկու տարեկան մանուկը կը ննջէր, առջինեկ մանչ զաւակը որ այնչափ ուրախութիւն պատճառած էր հօրը՝ ծնած ատենը:

Արշալոյսը նոյն գրութեան մէջ գտաւ մանկամարդ կինը: Երկինքը կը լուսաւորուէր եւ սակաւ առ սակաւ ախոտին գետինը նշմարելի կ'ըլլար: Առաւօտ էր:

Գիւղին տունները գրեթէ ամբողջն ալ այրած մոխիր դարձած էին: Ամէն կողմ՝ լուրթիւն կը տիրէր: Տաճիկ զօրքերը ուրիշ գիւղ մը գացած էին շարունակելու իրենց գործը:

Յանկարծ Վարդենի զակին ձայնը լսեց որ արթնցած էր եւ «Մայրի՛կ, անօթի՛ հմ» կը կրկնէր լալով:

Մանկամարդ կինը վերջին նայուածք մը նետեց ամուսնոյն գէմքին վրայ, կիսափուլ ախոտին մէջ ցանցնուած չոր խոտերը ժողուելով անոր անշունչ մարմինը ծածկեց, եւ առանց արցունքի, աչքերը չոր, զաւակը կոնակին կ'ապեց իր հանգերձովը եւ սկսաւ գիւղէն հեռանալ: Տղան լաւ մը տեղաւորած էր հանգիստ քաշելու համար: Վերջին նայուածք մը նետեց այրած գիւղին վրայ, եւ ա՛լ սկսաւ վազել:

Կրցածին չափ կ'աճապարէր, կարծելով որ գինուորները զինքը պիտի ձերբակալեն, ու, ոտքերը սառած, ճամբայ կը բանար ձիւնին մէջէն. խոկ պզտիկը մօրը մարմնոյն տաքութիւնէն եւ անոր քայլերէն օրորուելով դարձեալ նիրհեր էր:

Երբոր գիշերը մօտեցաւ, մանկամարդ կինը գեռ կը շարունակէր փախուստը: Ոտքերը թմրած, անօթութիւնը զանի կը տանջէր, բայց, ազատելու յուսով, բոլոր ուժովը կ'արտորար միշտ:

Մօտեցած էր խոշոր գիւղաքաղաքի մը սրուն լոյսերը

կ'երեւնային: Յանկարծ կանգ առաւ գահավէժի մը քով ուր հազիւ կարելի էր ոտքի մը տեղ ընել:

Պահ մը չորս գին զետեց:

Բայց նոյն վայրկեանին մանուկը դարձեալ արթնցած էր եւ ձեռքերը վեր բարձրացնելով ասոյին անգին կը նայէր: Մէյ մըն ալ շիտակ ոտքին վրայ կանգնեցաւ պարկին մէջ եւ կից մը տալով թաւալեցաւ ինկաւ անդունդին մէջ:

Երկու ձայն լսուեցաւ ամայի ճամբուն վրայ, մին տըղիկինը որ մայրը կը կանչէր, միւսը մօրը որ օգնութիւն կը պտար եւ որ զակին ճիշէն զարհուրած սկսաւ վազել:

Յետոյ նորէն ետ դարձաւ, նորէն նայուածք մը նետեց գէպի անդունդը ուր ձիւնին մէջ տղան թաղուած էր, եւ դարձեալ սկսաւ վազել: Ոտքերը արտաքոյ կարգի ճարպիկութիւն մը ստացած էին կարծես, վասն զի առանց սահելու անցաւ այն նեղ ճամբէն որ քիչ մը առաջ զինքը կը զարհուրեցնէր:

Քաղաք հասաւ կիսամեռ: Ձինքը գետինը մարած գտան:

Օրերով խելահորոյս մնաց, եւ երբ առողջութիւնը քիչ մը լաւացաւ, ինքն ալ ուրիշ փախստականներու հետ բողոքական երէցին տունը դիմեց նպաստ խնդրելու:

Մաստիկ էր բազմութիւնը երէցին սրահին մէջ: Հոն հաւաքուած էին մօտաւոր գիւղերէն փախչող զժբաղդները եւ լալով իրենց զլիւն անցքերը կը պատմէին:

Վարդենի դալկահար եւ մահու չափ տխուր գնաց պատին քով կեցաւ: Անզգայ աչքերով կը նայէր չորս գին: Ինչո՞ւն պէտք, քանի որ ինք ամուսին եւ զաւակ մէկ օրուան մէջ կորսնցուցած էր:

Երբոր ապուր եւ հագուստ բաժնեցին, ինքը միշտ անշարժ կը կենար. կարծես պարզ հանդիսատես մը ըլլար հոն:

Մակայն վերջին անգամ մըն ալ սենեկին դուռը բացուեցաւ եւ կին մը որ մանուկ մը գրկած էր՝ սկսաւ յառաջանալ:

Վարդենիի աչքերը փայլեցան եւ զանոնք կը շփէր: Արդեօք իրա՞ւ էր տեսածը:

Այդ տղան յանկարծակի տեսիլքի մը ազդեցութիւնը ըրաւ վրան:

Բայց մանուկը զանի ճանչցած էր եւ երկու պզտիկ ձեռքերը երկնցուցած,

—Մայրի՛կ, մայրի՛կ, կը կանչէր:

Իր Գիրգորին կը զոր անցորդ գիւղացիներ ազատած էին խորխորատին մէջէն:

Վարդենի անզգայ գետին պտրեցաւ: Ներկայ եղողները, որոնց յուզումը անկարելի է նկարագրել, անոր շուրջը բոլորած էին եւ զանի սթափեցնել կը ջանային:

Երբոր աչքերը բացաւ՝ առաջին նայուածքը աղեկին եղաւ որ սաստիկ կուշար:

Բարի կին մը գէմքին մօտ բնած էր զանի եւ ուժով ուժով անոր թշերը հմուտով կը լացնէր:

Ու երբ Վարդենի անոր ձայնը լսեց, այն ժամանակ հաւատաց իր երջանկութեանը:

ՏԻԿԻՆ ԽԱՐԻ ՍՎԱՃԵԱՆ

Թ Ա Փ Օ Ր Ը

Գարնային օր է լուսափայլ, սսկիզէն :
 Լուսամբտին, զոր ջերմ՝ ցոլքեր կ'ողողեն,
 Առջին նըստած՝ ես կը նայիմ՝ երազկտտ
 Թագին վըրայ՝ որուն արններն մօտ առ մօտ
 Կարգ կարգ կ'իջնան մինչեւ ծովուն ափը լուռ,
 Ուր պարանեալ կը տատանին նաւ եւ կուր :
 Ուր մօլոր եւ քարալից զտրիթափ
 Կը ճեղքէ թաղը մէջտեղէն, գարտտափ
 Հոգ շրջաւոր գերեզմանաց եւ անշուք
 Կը խափանէ կարծես խննտունն ու շրջուկ՝
 Տարածելով մեղկ արխրութիւնն իսլամի :
 Կը գուշակես վանդակին տակ հարեմի
 Խորհըրդաւոր եւ գաղտնելից կեանք մը մութ՝
 Ուր արեգակն անգամ չ'ըլլար զերամուտ :
 Երկու տատրակ մերթ կը թըռին եւ կուգան
 Հոգ երդիքի վըրայ նըստիլ սղբական :
 Փոշեթաթաւ նոճի ծառեր սղզակերպ
 Ճամբուն վըրայ կը կանգնեն բուն բազմածերպ :
 Օղակ օղակ ու լուրթ ծովէն հեռաւոր
 Կը ծաւալի քամակ մը զով եւ մօլոր,
 Ու կը թեքէ ծրխոյ ցըցունքը սպիտակ
 Նաւափայտին՝ որ կը սահի երկնից տակ :
 Հանգիպակաց եզրը՝ շէնքեր խիտ առ խիտ,
 Պարտիզապատ տուն, մինարէ եւ մըզկիթ
 Ուր կը ցոլայ ոսկի մահիկ վառ ի վառ
 Միգախառնած՝ դեռ յըստակ չեն երեւար :

Բայց լըսեցի երգի ձայներ մանկական
 Որ խորտուբորտ, մըթին ճամբէն վեր կուգան,
 Եղանակմամբ խանաշըփութ, անշընսորհ :
 Ահաւասիկ թիրք տըղայոց մեծ թափօր
 Եկաւ ելաւ երեւան, մանչ եւ աղջիկ
 Գըպրոց տըղիկ մը կը տանին գեղեցիկ :
 Աղջիկներն թոյլ ծաղկանըկար պարեգօտ
 Կը ծածանեն՝ աչք քըթթելով նըւազկտտ .
 Կը զարգարեն ծոպերն ուլունք զխտակնուն,
 Ու կը կարգան Դուրանի մէկ քանի տուն
 Ձոր մանչ տըղայք կըրկնել կ'անունն փոխն ի փոխ,
 Եւ ետեւէն կը մըրմընջէ խուռն ամբոխ :
 Գիշերապահն ալ, ըսպիտակ ծերունի,
 Ոսկեճապուկ մինգար մ'առած կը սանի,
 Որուն վըրայ ծալապատիկ եւ հըլու
 Կուչ պիտի գայ տըղեկը գիւր գըբլու :
 Հիմայ նըստած աւանակի մը վըրայ
 Զուգուած կապուած՝ տըխուր կ'երթայ, կ'երերայ :
 Կը յօրինեն փունջ մը նարօտ եւ զանակ,

Որոճ մը մեծ՝ եօթը ծակով, կապուտակ,
 Դըրամ մ'ողկի՝ կապած ծոպին հետ ֆէխն :
 Գունատ է ան, անոյշ անոյշ կը հոսին
 Կը կաթիլըթեն մեծ աչերէն արսատուք :
 Ագատութիւնն րաթն իրմէ — ս'հ ինչ սուգ :
 Ալ ան պիտի չըկըրնայ զուարթ ոստոստամօր
 Վազել խաղալ անսաստ, մօրմէն ապըրտամօր
 Փողոցներու մէջ, կըտրել ճիւղ մը ճինստ
 Ճապուկ շրուրայ՝ որ կը ծաղկի պատին մօտ :
 Կամ թափառիլ, շընչել քամին խընկաւէտ,
 Եւ երազել, միաբանիլ թըռչնոց հետ՝
 Երթալ սուգած տեղը, զբօնուլ ինքնապըուփ :
 Ա'խ զըպրատան գուռը բացին, սեւ նըլուզ,
 Հոգ քաղելու տեղ ծաղիկ՝ դաս ընել գոց,
 Վարձապետի սաստ՝ նըւազին տեղ թըռչնոց,
 Եւ փոխանակ ժըպիաներու մօր ներօղ
 Պիտի զըտնէ չար պատուհաս եւ մօրչ ջոխ :
 Եւ չեն սիտիեր զանի երգերն միւս արզոց,
 Երբ կը հընչեն « Ամէն » բըլուր ու փուլոց :

Նայած պահուս այս շնորհալից հանգիտին
 Ձար սխ չար նենդ հօգիս խայթել կը սկսին .
 Ասեղութեան խանձողը ծուխ կ'արձակէ :
 Ի գուր կ'ուզեմ թօթիկը փըրկել զիս տակէ .
 Կը պըղտորին աչերս, կարծես արեան ամպ
 Կը պաշարէ զանոնք յիտար կուրութեամբ :
 Եւ խոշոշալ կը թաւալի ճետը խուժ
 Որ սիրելի զեռ մանկալթեամբ է աշխոյժ .
 Բայց քիչ օրէն թունով արբած զօրացած
 Աղետաբեր պիտի ըլլայ միւս ազգաց :
 Ո՛չ, չեմ կըրնար սանձել զիս, ա'խ կը ցանկամ
 Այլ սերմը ժանտ խըղզիլ ձեռօք անըզամ,
 Գեախն զարնել, փըշրել անխիղճ անխընայ
 Որ անոնցմէ այո՛ եւ ոչ մին մընայ :
 Ո՛չ, չեմ կըրնար խօսքին լըսել բարեմայն
 Որ կը խրատէ ներսը ըլլալ թըշնամույն :
 Ա'խ կը յիշեմ մեր մանուկներն այնչափ հեղ,
 Աչեղ, անուշ եւ անարատ գտաճոց պէս,
 Որ սրախողխող եղան ձեռօք վառ զօրաց .
 Եւ հեծեծմամբ երկիրս թընդաց եւ գոտաց :
 Ծիծաղելով առին եւ վեր նետեցին,
 Ապա զանոնք թըրի ծայրով կըթեցին .
 Ա'խ սղջակէզ ըրին զանոնք եւ յօշ յօշ
 Շամփրեցին մանըր անգամներն ե թօթոշ .
 Կամ՝ պարսեցին վայրագաբար խոր ու ձոր :
 Թըշուտո մայրերը կողկողմամբ ահաւոր,
 Խեղապարած, եւ ճըչելով շընչասպառ՝
 Կը տեսնէին բարերն ի վար առապար

Պըտուտկելով երթալ գլորիլ մանկըտին :
Ինչ չափ կայ դառն խալածութեան զայրութին ,
Այնչափ գազան դարձան , այնչափ մաշեցան
Շանաճանճօք արինախանն թինութեան :

Որորաններն ունայնացան , ո՛վ Աստուած .
Վերջալուտի յետին պահուն մըթամած
Երդը լընեց սեմոց վըրայ հիւզերու
Որ կը հընչէր խընդապատար եւ հոռու :

Փաքրիկ , բընքոյշ մարտիրոսներ , հէ՛ք տըղաք ,
Ազանիներ որ Յիսուսի զոհ եղաք ,
Դուք ճըտերնիդ մանեակ կապած կարմրաւոր
Ելաք թըռաք տունը գացիք երկնից Հօր :
Դուք ծագիւրներ որոնց արեամբ փըթթեցան
Հայաստանի գաշտերն սմբողջ մահացան .
Եթէ Աստուած մը չը կայ ձեզ գըթացող ,
Եթէ չունի ցասում , չունի շանթ եւ ոխ ,
Եթէ անհոգ ան կը մընայ խուլ ու կոյր , —
Մեր տըղայոց արի՛ւն՝ եղիր դու սընդայր
Լիրը երեսին վըրայ գարուս անամաշ
Որ զքեզ տեսաւ եւ չը մեկնեց զինեալ աջ .
Ինկի՛ր անոնց գըլխուն վըրայ շարապարա
Որ նիւթեցին աղէտք եւ մահ բարդ ի բարդ .
Սերունդը թող անոնց չորնայ անիծեալ ,
Թող կարենան գաւակնուն մահը տեսնալ ,
Թող « Զաւակնին » պոռան բացած աչերնին
Փափաքելով որ ա՛խ իրենք ալ մեռնին :
Մենոց սըրտին վըրայ կաթիլ առ կաթիլ
Թող սառն կսկիծ ծորի , երթան պաղատիլ
Խորաններու առջին փըռուած լալազին ,
Խուն նըշմարեն ցոլըր տըխուր ճըրագին :

Ո՛րչափ ինկաւ անբանացաւ մարդկութիւնն
Որ չըկըրցաւ անփութութեան թանձըր բունն
Թօթափելով բունն պահանջիլ սր առնուն
Դուժ ձեւացմէ բարբարոսին սեւանուն
Դահճի գանակը զոր անի կը ճօճէր
Յիւմարացած եւ Յազթութիւն կը գոչէր :
Երբ սաստիկացաւ անմեղներուն աղաղակ ,
Դըղըրդեցաւ աշխարհ , առէն միժ քաղաք
Քոյժը լընեց ազգիս տըղոց փողսաման՝
Ինչ բրին . — ա՛խ , ելաւ խոհեմ հըրաման
Որ այդ կառաշը սըրսառուչ չըլընեն ,
Յետոյ կեղծամբ՝ Չէինք գիտեր մենք , ըսին .
Քաղաքացին այլաբունած չը հարցուց
Հրապարակաց վրայ ուժգին թէ այս բարուց
Ազարատիւնն արգեօք յետին աւօթ չէ՛ր ,
Ոճրակցութիւն չէ՛ր դա :

Սակայն կը նուաճէր

Խօսքը զանոնք կարդ մը մարդոց լըրբարան ,
Որ կը նըստին կը խաղան խաղը բարան
Քաղաքական կատակախառն պայքարին
Երկայն փայտին վըրայ : Զայրոյթ թող զգայոին
Էւ նախատինք հասարակաց բերանէն
Անսիրտ վատաց գէ՛մ որ ստութիւն կը մանեն ,
Զազիր սարգեր , պատրաստելով որոգայթ .
Որ չեն ուզեր ճըշմարտութեան ճառագայթ
Իրենց ցոլայ գործին վըրայ մըթասէր :
Ցարգ՝ ոչ ոք այսչափ լըկտութիւն էր տեսեր :
Մերթ ճօճելով ճառի ճընծղան միասին ,
Մերթ շարժելով բոժոժաճայն բառեր սին ,
Էւ մերթ արծաթ ցուցընելով բազմութեան՝
Զայն պատրեցին — պիտի պատրեն յաւիտեան :

Մեղաւոր չէք դուք , գունաթափ մանուկներ ,
Որ հարեմէն կ'առնուք արին ախտաբեր ,
Որ զըպրատանց մէջ բըթամիտ կը մեծնուք
Սաղմոսելով վերձանութեան եզանակ .
Խալածութեան կը խարանէ վառ երկաթ
Ձեր մատաղ սիրտը , թոյլ հօգին եւ ճակատ :
Քրիստոնէին գէ՛մ բինեւոր կուտան դառ
Ձանի աակ ձեզ , անարգել հանապազ :
Երբ զօրանաք՝ ձեր շարութեան քարն ու տեղ
Դուք խընդութեան մըտօք պիտի մեղ նետէք .
Էւ երանի՛ թէ այժմ՝ երբ էք տակաւին
Մանրը իձեր՝ որ սորսուտ կ'երբեւին՝
Սըրածութիւն ըզձեզ ամբողջ զըրաւեր —
Չէիք ըներ զաշխարհ աւար եւ աւեր :

1896 կոստանդնուպոլիս .

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ ՃԱՄԲՈՒՆՈԹԵՐ

Հ Ա Յ Կ Ա Մ Ա Ի ՈՐ Ն Ե Ր Ը

ՀՅԼԵՆԱԿԱՆ ՎԵՐՁԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԷՁ

« Սիսոն »ը կապոյտ , անալիք ջրերը կը ճղէ . հեռուն
Ֆրանսական ափունքը հեողհեոէ կ'անհետանան : Ծոյե-
նաւը լիցսն է : Մայիսի մէկն է եւ աչքդ ստէպ ծագիկնե-
րու կը հանգիստի : Երկու բարեկամներս հ ես , լուս ու մանջ ,
ոսքի վրայ , կը զիտենք յիսունի մօտ Ֆրանսաբնակ յոյն
կամաւորներ որոնք երգելով դէպի Յունաստան կ'երթան ,
դէպի հայրենիքի կոիւր . . . : Շատերը , նստած , խնդումներս
կը խօսակցին . սմանք երօղիստ տխրութիւն մը ունին :

Կրեաէ : Սրտերնիս կձկուեցաւ : Ո՛րքան նախանձելի օրինակ մը ազատութիւն երազող սրտի մը համար որ հառաչել միայն գիտէ . . . :

Հմայած կը նայէի անոր ժուռա սեւ լեւներուն, ու խորհեցայ իմ Չէյթունիս, այնքան սիրելի մեր սրտին, մեր անբաղդատելի Չէյթունին : Բարեկամներու նայեցայ, զիրար հասկցանք . . . Ո՛րն է աւելի կտրիճը : Ան անոր լեւները ունի, հասցա եթէ ան ասոր ծովն ունենա՛ր . . . :

Մինչ հեռուն կզգիին եզրին մօտ երկայն սեւ զիծ մը ջրին հաւասար կ'ընթանայ, կասկածի եւ մասնութեան սողումով մը,

— Թորփիլակի՛ր մը, պոռաց յոյն ճամբորդ մը :

Եւ գիտակները այն սեւ օձին կը հետեւէին :

Քիչ մը անդին շոգեմաւր ընթացքը մեղմացնելով, « Աքրոթիբի » ի հրուանդանը սկսաւ դանալ : Դէպի Սուաայի ծոցը կը ղեկավարէր : Ահա՛ երկու ահեղ անգլիական զորահաւոր, իրարու նշաններ բնելով, կարճ խօսակցութենէ մը ետքը տարբեր սեղաններու ներսն ու կը հեռանան :

Սուտայի ծոցը հասանք : Սարսափ . կարծես լճակ մը, ուր բոլոր Եւրոպան կը վխտայ . զրահաւորներ, թորփիլակիներն ու յոյն զրօշի մը հովանիին տակ դասակարգեալ խումբ խումբ կը կենան, վիթխարի թնդանօթներ պատրաստ կը սպասեն աչքերնին տնկած լեռանց գագաթներուն ուր հելլենական զրօշը տեղ տեղ կը ծփայ, ուր կրետէցի ապստամբներ, հրացան ուսին, գագաթէ գագաթ, ժայռէ ժայռ կ'իջնան, կ'ելլեն միշտ շարժման մէջ :

— Ա՛խ, սիրո՛ւն կարիճներս, հառաչեց սիրտ մը :

Երկու աչուրները կը փայլէին արցունքներու լճացումէն : Յոյն տիկինն էր . շոգեմաւրն եզրին կը թնամ, թաշկինակը կը խածնէր, չհեծկտալու համար : Քուլընաի, անգլիացի վաճառականը, անգլիական մարտանաւերու տեսքէն ոգեւորեալ, գոռոզ աքաղաղի մը նման, հպարտութենէ վառվռուն այտերով, կը մօտենայ յոյն տիկնոջ, ու բարեկամաբար .

— Տիկին, ծաղիկները հոս ծովուն վրայ սփռեցէք, առիթն է :

Անի գլուխը դարձաց, անգլիացիին երեսն ի վեր նայեցաւ :

— Երբե՛ք, պարոն, երբե՛ք . հոս ջրերը պղծուած են մեր թշնամիներուն նաւատորմիդներէն :

Խեղճ կին :— Ի՛նչպէս եւ ո՛ր պիտի կարենաս սփռել այն մայիս մէկի ծաղիկները որոնց վրայ ազգակցութիւններդ համբոյրներ դրած քեզի յանձնած էին որպէս զի զանոնք Պիրէոնի ծովուն վրայ սփռելով, սրտերնուն բարեւը տաս Աթենքին ու Հայրենիքին . . . : Խե՛ղճ կին, ո՛ր որ երթաս՝ Յունական ծովը պղծուած պիտի գտնաս . . . :

Աթէ՛նք, սպիտակ իր մարմարներուն եւ փոշիին մէջ, սրտագրդի և ցասման դաշկութիւնը ունի : Շտապ, զայրոյթ,

Ահն ու Յոյսը, զիրար հրելով, պոռալով, հակաճտեղով ու քֆրելով, բոլոր քաղաքը կը սարսուռն : Մայթիւրու ու հրապարակներու վրայ, հարիւրաւոր սրճարաններուն մէջ, դեմքերը անբաղդ ու գոռոզ սիրութեան մը խանութը կը կրեն . . . :

Յոյն ժողովուրդը իր պարտութեանց խոսիմանը մէջ պահ մը ամփոփուելով՝ ներսիլին նոր առելութեան մը բոցը զգաց զոր երեւք զգացած չէր, այն է Եւրոպացիներուն դէմ առելութիւն մը : Եւ ո՛րքան լաւ կ'ըմբռնէր մենք Հայերս այդ փոքրիկ ժողովրդին զգացմունքը որ անհաւասար կուտի մը մէջ ինքզինքը իր ժայռերուն վրայ կապուած պարանուած դաս Եւրոպային ձեռքէն : Երբ Աթենքէն իսկ, այդ ժողովուրդը կը նկատէ Փալէրինի նաւահանդասին մէջ ահագին ծովային գազանները, որոնց բերդակաւոր կայմերուն վրայ Եւրոպայի զրօշները կը ծածանին եւ սրունց թնդանօթներուն երախը իրենց վրայ գարձած կը սպասէ, ի՛նչպէս չառէ, ի՛նչպէս չխածնէ, ի՛նչպէս չթքնէ այն Եւրոպային երե՛սը :

Ատելութիւնը այն աստիճանի Աթենացիներուն միտքը բարբոքած էր որ գերման նաւագները երկիր սոք կ'օխելու չէին համարձակեր . . . :

« Էթնիքի Էթէրիա » յի անգամներէն մէկուն ներկայացուած էի, որուն հետ շուտով բարեկամացանք : Գրղըուած, բարբոքած կը հակաճառէինք հայկական եւ յունական խնդիրներուն վրայ :

Ան իրենց պարտութեանց վրայ կուշար, եւ մեր ի զուր թափած արիւնը կ'ողբայի :

— Ա՛խ, բոսա, եթէ այս միջոցիս դուք ալ ապստամբէիք . . . ինչո՞ւ չէք շարժիր, առիթն է, մեզի օգնելով դուք ալ կ'օգտուիք :

Դողացի պահ մը, աչուրներս արիւնտեսեցան՝ դաշցի . . . : Եթէ այդ Յոյնը ամբողջ Յունաստանը ներկայացնէր, բարեկամս ըլլալով հանդերձ կը խզգէի զինքը, պիտի խզգէի անշուշտ : Ինքզինքս զսպեցի :

— Ի՛նչպէս կը համարձակիք այս խօսքերը ինձի, Հայո՛ւ մը, ուղղել : Երբ մենք ոտքի ելանք, երբ ամբողջ աշխարհ պահ մը շուարած էր, երբ Չէյթունը կը մանչեր անընկճելի, երբ Պոլիս տակն ու վրայ էր, երբ Տաճկաստանը վերջին շունչը փչելու կէտին բերինք, դուք ի՛նչ կ'ընէիք, Կրեաէն ինչո՞ւ չշարժեցաւ, Մակեդոնիան ինչո՞ւ չարթնացաւ, ինչո՞ւ, ինչո՞ւ : Չգեցիք որ մեզ բզկտեն, ձգեցիք որ թեւերնիս կարտեն ու հիմա մեր ձեռքերը կը փնտռէք . . . :

Ան գլուխը ծոց, իմ ալ սիրտս շուտով կակուցցաւ : Մտածեցի որ միեւնոյն ճակատազիրը, միեւնոյն լուծը կրած են մեր երկու հայրենիքները : Դժբաղբութիւնը եւ տառապանքը սրտերը կը մօտեցնէ : Իրարու ձեռք սեղմեցինք, իրարու վերքերը զգացինք ու զանոնք զովացնելու եւ դողուելու համար մեր արեւելցիի անահաւատ հոգիներուն մէջ կը փնտռէինք ու կը զգայինք սարսափեցնող

նախագագաւմներ . վրէժնիս յագեցնելու համար , սեւ , աչ-
ոնի ժարգարէութիւններ ըրինք Եւրոպայի վրայ . տակու-
թիւնը շրթներնու վրայ սարսուաներ կը գնէր :

— Արիւնը արիւն կ'ուզէ . մօտ ապագայի մը մէջ
անոնք ալ զիրար պիտի բզկտեն եւ երբ անոնց գիակնե-
րը միլիոններով հաշուուին՝ այն ժամանակ միայն մեր
300,000ներուն հօգինբը պիտի հանգստանան , ու մեր
վրէժը պիտի յագենայ : Մեր անէժըը անոնց գլխուն վրայ
թող ծանրանայ : Վայ , վայ , վայ անոնց գլխուն :

Նայուածքնու մէջ ունէինք ներշնչիալ հօգիի մը վստա-
հութիւնը , ձայներնիս այնպիսի խորին հաւատքի մը շունչը
ունէր սր Եւրոպացիի մը գէժըը պիտի գալիւնար սար-
սալէն :

— Եկող անգամուն , աասը տարիէն , ո՞վ գիտէ երբ ,
մօտ կամ հեռու ապագայի մը մէջ , խրատուած այս սոս-
կայի գասէն , ճիգերնիս միացուցած նորէն սարքի կ'ելլանք ,
ձեռք ձեռքի տուած :

Զիրար զրկեցինք ու բաժնուեցանք :

Եկող անգամուն . . . :

— Բոլոր բանակը Տօմօքօ կեղրոնացած է . քսանըչորս
ժամէն մարտ մը անհրաժեշտ է :

Պանգսի վագեցի :

— Պատրաստուէ՛ , պտուցի բարեկամիս :

— Ի՞նչ կայ :

— Շո՛ւտ ճամբայ ելլանք , աճապարէ՛ :

— Ի՞նչ կայ :

— Քսանըչորս ժամէն մարտը անհրաժեշտ է :

— Ո՞ր , ի՞նչ մարտը :

— Դոնն քունի մէջ ես , Տօմօքօ , Տօմօքօ , բոլոր բա-
նակը Տօմօքօ՞ կեղրոնացած է :

— Ո՞ր կից իմացար , ո՞վ ըստու :

— Շո՛ւտ ըրէ՛ , երկու ժամ ունինք միայն , Բօքը ըստու :

Օ Բիրիսս Բօք : Տիպա՛ր մը : Բոլոր Յունաստանը
Բօք մըն է , բարեկամս Բօքն ալ բոլոր Յունաստանը կը
ներկայացնէ :

« Էսթիա » լրագրին խմբագիրն է , միջահասակ , թիւս-
ղէմ , պիտիերը ուրբած , միշտ շարժման մէջ մարմին մը .
կ'երթայ , կուգայ , ամէն տեղ կը հանդիպիս , խօսքէ աւելի
շարժում ու գործէ աւելի ալ խօսք կ'ընէ . կրակաս , թերեւ
գեղագէտ , հասակէն աւելի բարձր կ'ուզէ երեւնալ , անոր
համար ալ քալուածքին մէջ սպառնալիք մը ունի :

Բիրիսս Բօք : Հարագատ որդի Ելլագայի , արդէն
ի բնէ շահագրգիռ , բայց աւելի շահագրգիռ երեւնալու
բաղձանքի մէջ , սովորականը , որ սակալ խոհեմ է , կ'ար-
համարհէ ու արտասովորին ետեւէն վազելով , յաճախ ու-
ղիլ ճամբէն դուրս կը գլորի :

Յանկարծ ձեռքս բռնեց .

— Արտասովոր ը՛ւր մը :

Աչքերէն կրակ կը թափի , թեւին շարժումը միջոցը կը
բռնէ . . .

— Բոլոր բանակը Տօմօքօ կեղրոնացած է . քսանըչորս
ժամէն մարտ մը անհրաժեշտ է . . . :

Բօք , Ելլագայի հարագատ որդեակը , մայիս 10ին
մեզ Տօմօքօ զրկեց , երբ կոխը 17ին տեղի պիտի ունե-
նար . . . :

Կէս գիշերը երկու ժամ անցած է եւ դեռ շագնաւը
պիտի մեկնի . . . : Բարեկամիս հեռ միտին նաւուն եզրին
կրթնած , յուզեալ կը նայինք : Դիմացնիս քարափը կիսա-
բոլոր կ'երկնայ , քաղաքը ելեկարացած է , բոլոր Բիրէա
կը սարսուայ . հոս կոչեր , երգեր , հրազնի պայթումներ ,
անդին նաւերու սոյլեր , շեփորի հնչիւններ իրարու կ'ար-
ձագանգեն , շարուած առագաստանաւեր հեծեծանքով կայ-
մերնին կ'օրորցնեն , պահապան շուն մը կը հաջէ , ջահե-
րու ծուխը , լուսի ու խաւարի խառնուրդը իրարու կը միա-
նան ու ամէն բան կ'աղօտանայ , կը տարտամայ ու այն
գիշերային ժամուն քաղաքը՝ աչքերնու՝ աղտոտ երկայն
մագերով պիւհար կ'նոջ մը կերպարանքը կ'առնէ :

« Զիթօ Կարիպալտի » զոչիւնները կը կրկնուին ու
նորէն շեփորը կը հնչէ եղանակ մը . խումբ մը կարիպալտ-
եաններ կը շար էին կուգան , քարափին կը մօտենան : Կա-
րիպալտեաններու վերջին պատակն է , ֆրանսական պա-
սակը . ջահերու ծխոտ լուսաւորութեանը մէջ կաս կարմիր
կուրծքեր կը շարուին , հրացաններնուն ծայրը անցուցած
են ծաղիկներ զօրոնք աթենուհիներ իրենց նուիրած են .
ասոնք ալ կը հեծնան շագնաւու , « կեցցէ՛ Ֆրանսա , կեց-
ցէ՛ Կարիպալտի » , շոգնաւը կը սուլէ կամ թէ կը
խորդկայ կէս գիշերուան քունէն արթնցածի պէս : Աղ-
մուկ , շնչից , խառնակութիւն : Վերնայարիը լեցուն է ,
փռուած մարմիններ արդէն կը խորգան , շատերը հրօցան-
նին զրկած են : Խոհեմաբար ու լախով կարմիր բաճիկ-
նակներու լրայէն անցնելով դժուարութեամբ սանկուլիսին
կը հասնինք ու կ'իջնանք մեր խցիկը . սրահն ալ լեցուն է :
Առանց հագուստս հանելու խցիկնու անկողնակին վրայ
ինքզինքս կը նետեմ : Շոգնաւը ճամբայ ելած է :

— Արգեօք երբ կը հասնինք Տօմօքօ , կը հարցնի բա-
րեկամս :

— Բօքը հետերնիս չէ սր ըսէ :

Fareyou , գիշեր բարի :

Չկրցայ քնանալ . աչուրներս բաց , հեռուներն էի :

Տօմօքօ , պատերազմ , սովիններ , կարմիր բաճիկնակ-
ներ , լծնգանթի սրատուր . . . ու հեռուն , գիմացը
Տաճիկը :

(Շարունակելի) ՄԻՐ-ԵՐՕ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Փահիրէ, 2 մարտ 98

Ճշմարտութիւնը փնտաւորներուն . — Հայկազանց ազգեցութիւնը նոր սերունդին վրայ . — Խորենոցիին գործը . — Անուններու հմայքը . — Չայն մը խտաբայէն:

Երկու տարի է սրտահասութիւն չէի սենեցած հանդիպիլ զգալիան մեր հին ծանօթներուն, «Բազմավեպ»ին ու «Հանդէս Ամսօրեայ»ին . քանի մը օր առաջ երկուքը մէկսեպ սեպայ բարեկամի մը ձեռքը . առած առեմս ըսի .

— Տարակոյս չունիմ թէ նորէն խորենացիով կը զբաղին:

Ու իրաւ ալ, առաջին նիւթը որ աչքիս զարկաւ, խորենացիներ էր . վերնագիրը «Նորէն խորենացի» . այդ «նորէն»ի կցումը ընթերցողն ներողութիւն խնդրելու պէտք բան մըն էր, ինչ որ աւելորդ քաղաքավարութիւն չէ: Հա՛րկ է ըսել թէ ես ալ ուրիշ շատերու պէտք չկարգացի: Ի՞նչ ընենք:

Կ'ըսուի թէ խորենացիին կտակածելի ընծայելու ջանք կ'ընեն Միխիթարեանները: Վենետիկցիները թէ Վիեննացիները: Որն ալ ըլլայ, միեւն յնն է . երկուքն ալ մէկ հօր զաւակ չ'են: Այս լուրին իրաւ կամ սուտ ըլլալը չեմ գիտեր, բայց եթէ իրաւ է, Միխիթար արքան հիմա յարութիւն աննելու էր . իր հիմնած Միաբանութիւնը ինքն իր ձեռքովը պիտի չի քանգէր արգեօք:

— Ես ձեզի ստեղծեցի որ Հայութեան անցեալը իր գերեզմանէն յարուցանէք, դուք եղա՞ծն ալ սպաննել կ'ուզէք, գոչելով:

Չեմ գիտեր ինչո՞ւ «գիտուն» ըսուածները այսքան խորենացիին ետեւէն ինկեր են:

Ճշմարտութիւնը երեւան բերելու համար, կը պատասխանեն:

Ի՛հ, պատմութեան մէջ «ճշմարտութեան» շատ բարակը փնտաւորու ելլելը խնդիր «բէօստէքի» համբուլուն պէտք բան մըն է: Աս ալ «ճշմարտութիւն» մըն է: Անցեալին շատ խորերը պարպուել ուզողներուն խոհումին կը յանձնարարեմ հետեւեալ գեպը որ իր պատիւութեանը մէջ կրնայ «նոր հորիզոններ պարզել» իրենց աչքին, եթէ պատմութեան հիւանդութիւնը բողբոջի կարճատես չէ ըրած զայն:

Մարտէլլէն Բարիկ երկաթուղիի գծին վրայ ետեւ ետեւ վազող երկու կտաւախումը իրարու վրայ ելան վերջերս: Պատասխանատուութիւնները սրոշելու համար քընուութիւն բացուեցաւ: Մերենախաբները աղէտը մտաւորապէս կը վերապրէին: Արկածէն ազատուողներէն վիայութիւն խնդրուելով, մէկ քանին մտաւարտապատ գիշերի մը թեւատարածութեանը վրայ պնդեցին . ուրիշներ ալ աստեղազարդ ջինջ գիշերուան մը պայծառափայլութեանը համար երջուրնցան . ու եզան ալ որ անկարող գտնուեցան որոշ պատասխան տալ սա պարզ հարցումին . «Մտաւարտ կամ թէ ոչ»: Մտաւարտը խորհրդածութեան ծնունդ

չի կրնար ըլլալ . կամ՝ կար, կամ՝ չի կար: Եւ սակայն գեպքին յաջորդ օրը երեք վիտներէն եւ ոչ մէկը համաձայն էր միտին: Ու կան խելացիներ որ հինգ հազար տարի առաջուան մարդու մը գանկին վրայ չեմ գիտեր ի՞նչ լրտած ըլլալուն, կ'իլլեն անկէ ճշմարտութիւնը երեւան բերելու:

Պատմութեան մէջ ճշմարտութիւնը կը փնտաւոր . — հարցուցէք ժողովրդին սրտին: Ճշմարտութիւն չէ՞ այն որ ազդի մը հոգիին թոխ կուտայ, վեր վեր կը բարձրացնէ զայն: Ինչ որ ազդ մը, անհաս մը կ'ազնուացնէ, ան ալ ճշմարտութիւն է:

Ո՞վ պիտի կրնայ նկարագրել վերակենդանացեալ հայ գիւցազներու ազգեցութիւնը մեր նոր սերունդներուն հստակեան յեղաշրջումին վրայ: Հայ պատանեկութիւնը, զբթբազուութեանը մէջ զլիտիւր, նմանեցաւ խեղճ որդեգրի մը որ օրին մէկը յանկարծ կ'իմանայ թէ ազատակ ցեղի մը շատաւորն է . ա՛լ զուլսը սիգապանձ վեր կը բարձրացնէ: «Ես ալ մէկն եմ» կը խորհի: Սեղանատրին մանչը, ոսկերչին աշակերտը, սափրիչին աղան երբ սեղեկացան թէ իրենք ալ Հայիկին, Արամին եւ Տիգրանին արիւնը կը կրեն, ա՛լ սարկութեան լուծը սխաւ իրենց ծանր գալ:

Ժամանակակից հայ ժողովրդին հանրային կեանքի գրուագիտը հաւաքող մը պիտի սեսնէ թէ Հայոց պատմութիւնը սրբան յեղափոխած է հայկական հոգին: Հազարէն մէկը պատմեմ:

Ասկէ 30-35 տարի առաջ, ճիշդ թուականը չեմ յիշեր, գերեզմանատան խնդիր մը ծագեցաւ . — Միխիթարեաններուն պէտք կ'ցեմ «նորէն» մը: — Ի՞նչ ընել . իրուտունքի պատերազմներու մարզանքի առաջին դաշար գերեզմանատունն է եղած մեզի համար . վասն զի գոն իր մեռելին յիշատակը իր անկապտելի սրբութիւնն է համարած Հայը: Իր բռնապետներուն, կեանքի վայելումներ . իրեն, մահուան հաճոյքները: — Խնդիրը այս անգամ իւր կիւտար էր, ու գծութիւնը Յոյներուն հետ: Տեղափոխ իշխանութիւնը բնականաբար կը հակեր մեր հակառակ դրոշմներուն կողմը քանի որ անոնք ուժեղ կ'երեւնային: Իւր կիւտարցիները գործերնին ձգելով շուկայէն խուճը խուճը թաղերնին կը վերադառնան «սուրբ գործին» համար: Չինուորներն ալ կուգան . հրամանատար փաշան զարնելու սպանալիքը կ'ընէ եթէ Ս . Կարապետի գերեզմանատունը դրաւ կուտան հայերը չցրուին: Երեսուսարդ փաստաբան մը, Գօլջեան, ժողովրդին սպանացող վըտանդը անսնելով, կը ջանայ միջնորդի գեր կատարել . բնականաբար նախ ժողովրդին խօսք հասկցնելու է: Պատասխաններէն մէկ քանին կը հրաւիրէ եւ պերճախօս լեզուով կը ջանայ համոզել հանգարտ մնալ եւ գործին կարգադրութիւնը Պատրիարքարանին թողուլ: Ու երբ խօսքը կը կնքէ «Հա՛յտէ, ձե՛զ սեսնեմ, եղբայրներս» նուիրազործեալ վերջաբանով, ահա խուճքին մէջէն ձայներ կը բարձրանան .

— Մեզի՛ նայէ, մեզի՛ նայէ, ազա, մենք բանէ՛ չենք վախնար: Մենք Հայկայ, Արամայ, Տիգրանայ արունը կը կրենք:

Փաստարանը որ քիչ մը հոգերան էր, ըմբռնեց թէ երբ Գալաթացիներու—Գրուիք գանուազ շուկացին Հայկին վահանը ձեռքը կը կարծէ, մինչև որ Բել մը չչտնէ չսպաննէ՝ տեղը չի գանար: Առանց յամառելու դնաց փաշային մօտ, ու քաղաքավարի փափուկ բացատրութիւններով հասկցուց թէ «ճահիլ»ներ են, խօսք չեն հասկնար, փաշան տեղի տալու է: Կ'երեւայ թէ հրամանատարն ալ նրբամիտ մէկն էր, կարճ կապեց: Ծնորհիւ Հայկին, Արամին, Տիգրանին, յաղթանակը մեզի մնաց:

Թիւրքերը պատմութեան հրաշագործութիւնը ազէկ հասկցեր են: Վերջերս համբաւուր փաշա մը հայ վարդապետի մը բառ առ բառ հետեւեալը կ'ըսէր.

— Հայերուն այս բոլոր բրածները Հայկին, Արամին, Տիգրանին գործն են. մինչև որ սա ամէնը ձեր զգրոցներէն չվերցնէք՝ գործերը պիտի չի շտկուին:

Մենք ալ չվերցնենք Խորենացին. ա՛ն Հոգի մը զբաւ մեր Հայրենիքին մէջ, կեանք տուաւ հողին ու ջրին, ու վտարանդի Հայը, անո՛վ, հայրենի երկիրը կոխած ատեն զիւցազններու հետ կենակցել կը կարծէ:

Երբ 1884ի մայիսին Էջմիածին կ'երթայի, Դիլիջանի սարերէն վեր բարձրացած ատենս զգացի պատմական մէկ աւանդութեան խորին հոգեբանութիւնը: Պարսիկները Անյուշ բերդին մէջ Արշակ Բ.ի սոքերուն տակ քիչ մը Հայաստանի հողէն կը դնեն փորձելու համար հայրենիքի ազգեցութիւնը շղթայապիտի հայ թագաւորին հոգիին վըրայ, եւ ահա Արշակ, որ կ'անգիտանար սոքերուն ներքեւ կաարուած փոփոխութիւնը, յանկարծ ինքզինքը տարբեր մարդ կը զգայ. կը խիզախէ, կը գոռայ Շապուհի դէմ: Ու երբ մէկի կը տանին հայ հողը ու Արշակ կը կոխէ պատկական գետինը, կրկին անգամ անձնատուր կ'ըլլայ լքումի:

Կը բարձրանանք Դիլիջանէն վեր. սարահարթին կատարը կը տարածուի Սեւանայ լիճը, ու երբ արդեան կը սուրայ անոր երկայնքը, Մեղմաղձութիւնը շուրէն բլրեկով կը պատէ ամբողջ էութիւնս, ու կը խորասուզուիմ յիշա. տակներու աշխարհը: Հազարաւոր տարիներն են որ կուգան կը սահին աչքերուս առջեւէն: Ու կարծես ամենքը կը տեսնեմ: Հոս Գեղարքունիքն էր, անդին Արմենակ կը ձեւեր. ու ինձի այնպէս կը թուի թէ հովը Սօսեաց անտառին խարշափիւնները կը բերէ հետուէն ու կ'ոգսկէ սիրտս:

Անո՛ւ յարուականներ,

Անոնք ինձի հետ, ու ես անոնց հետ:

Կը զգաս թէ աներեւութացեալներուն հետ ալ «սրակ ի սիրա ճամբայ կայ». — ու նորէն աւելի կը սիրես Խորենացիդ. առանց անոր այդ կոնանչներն ալ պիտի չի տարբերէին ամէն տեղի կանանչներէ, եւ Վասիսըբը հաւանօրէն աւելի զեղեցիկ երեւնար աչքերուդ:

Ու այդ յիշատակները չե՛ն որ հայր տաքուկ կը պահէ սրաին մէջ, մէկտեղ կը պատցնէ զանոնք իրեն հետ, ու

Միտիսիւրին, Սէնը, Թէմիզը իրեն մոռցնել չեն ի տար Եփրատը, Տիգրիսը: Շեաակը ըսելով անախորժ սպաւարու թեան տակ մնացի հեղնութիւններէն որոնք Ամերիկա նոր հրատարակուող թերթերու անունին շուրջը թռչտեցան: Գէթ պանդուխտները չեն կրնար ծաղրել անուններ որոնք պանդուխտ Հայուն համար կը նմանին «խուրպէթ» գացող զակին «խուրճ»ին մէջ մօր մը սպրդեցուցած յիշատակին, զինքը չմոռնալու համար: Հայը ամէն տեղ իր հիմնած թերթերէն զոնէ հայրենիքի յիշատակը միշտ մտաբերել կ'ուզէ. ուստի կ'ունենայ «Արշալոյս Արարատեան»ը ու «Արփի Արարատեան»ը, «Մասիս»ը, «Նոյեան Աղանի»ն, «Հայաստան»ը, «Հայք»ը եւ սրբիչներ: Եւ հիմա Ամերիկայի հայուն ականջին հայրենիքի շուրերուն խոխոջները չե՛ն լսեցներ արդեօք «Եփրատ»ը, «Տիգրիս»ը: Օ՛հ, կը բաւեն օրուան տխուր իրականութիւնները, ու չպահանջենք որ Ամերիկայի հայ թերթ մը «Աշխատանք» կոչուի կամ «Գործարան»: Առանց ատոր ալ օրն ի բուն խեղճերը գիտեն թէ ի՛նչ է աշխատութիւնը, ի՛նչ է գործարանը: Յիշատակին բանաստեղծութիւնը թո՛ղ քիչ մը լոյս ցաթեցնէ օրուան խոնջէնքին մթութեանը մէջ: Այդ ալ բարիք մըն է. Լոյսին քաղցրութեանը մէջէն պանդուխտը պիտի ընդհարէ օր մը ըզձանքին հասնելու յոյսը:



Պանդուխտին հետ ամբողջ հայութիւնն ալ Յիշատակին բանաստեղծութեանը, ըզձանքին հասնելու Յոյսին չի կարօտիր իր ծանրածանր վշտերուն թախիժը փարատելու եւ աչքերը հաւատքով ապագային վրայ յառելու համար: Սրտագին ուրախութեամբ ընդունինք իբր մեր մեծ բարեկամը ո՞վ որ կուգայ յիշատակներու աղօտանշոյլ աշխարհէն Ապագան մեր առջեւ լուսափայլ ցոյց տալ եւ մեզի հոն առաջնորդել ամբապնդելով սրտերնիս, ուժ տալով մտքերնուս:

Երբ հայ ժողովուրդը պաշտպանելու խօսքեր կը գանան Եւրոպայի մէջ, չե՛նք գիտեր թէ մեզի նկատմամբ արտայայտուած հոգածութիւնը քիչ շատ կը նմանի—աւելի շատ քան քիչ— այն կարեկցութեան զոր կենդանիներու համար ցոյց կուտան անասնապաշտպան ընկերութիւնները. սա սարբերութեամբ միայն որ մենք նուազ բազմաւոր ենք: Մեզի կարող թիւրքին չարութեան մեծութիւնը օրէ օր աւելի հաստատելու համար պէտք է օրէ օր աւելի համոզենք Եւրոպան թէ Հայերու ջարդը հակամարդկային եւ զեռնագործութիւն մը չէ միայն, այլ նաեւ ոճիր մը քաղաքակրթութեան ընդհանուր տարածումին դէմ, վասն զի Հայը մարդկային յառաջիմութեան սատարելու կոչուած տարր մըն է: Այս համոզումով է որ մեր պատին համար, մեր ապագային համար աշակցութիւն կրնանք համարել ամէն հրատարակութիւն որուն նպատակն է հայ ազգանդը, հայ քաջութիւնը պարզել Եւրոպայի առջեւ: Վերջին քրոնիկիս մէջ հրճուանքով կը յիշէի Չօպանեանի ու Աղասիի հրատարակութիւնները: Անկէ ետքը եւրոպական սուրհանդակը անսպասելի նորութիւն մը բերաւ մեզի: Նոր

հրատարակութիւն մըն է ասիկա, իտալերէն, որուն ակնարկ մը տալով բաւականանանք, զայն օր մը «Նոր կեանք»ի ընթերցողներուն մանրամասնօրէն ծանօթացնելէ առաջ:

«Կ'ողջունեմ՝ բեգի, զիւցազնաբազա՛րդ Ձէյթուն» սրտէ բղխած ու շիտակ մեր սրտերուն զարնող այս ողջոյնը կը պարագրէ Անագոլիօ Լազինոյի երկու հատորին հոս: Խոր թախծութեամբ համակեալ յուսահատ տարաբազկին պիտուն վերեւ յանկարծ լուսափայլոյ յուսատու հրեշտակին ձայնն է կարծես որ կը հնչէ: Երազներո՛ւ հըրեշտակը թերես: Ո՛ր կը սկսի սակայն երազը, ո՛ր կը վերջը: Երազին գէշն ալ կայ, բարին ալ կայ: Ինչո՞ւ հաւատալ մէկուն միայն, ուսերը վեր թոթուել միտին համար: Կոտորածը, ան ալ երազ մը չէ՞ր, գէշ երազ մը զոր տեսնել մտքէն չէր կրնար անցընել ան որ իր տարիները գեոյտունով միայն կը համրէր: Բարի երազին ալ հաւատանք:

Թափառայած կը գեգերի Անագոլիօ հայ աշխարհը, կը հարցափորձէ դարերը, կը պրպտէ հայ կեանքը, կը գննէ հայ տաղանդը, հիացումի սքանչաշունով կը կանգնի Ձէյթունի գէմը ու այդ ամէնուն վկայութեամբը խանդավառ կը յայտարարէ ազգային ինքնավար կեանքի համար մեր իրաւունքը, վասն զի Հայը տաղանդ ունի, բարոյակահութիւն ունի, կարիճ է:

Ու ան որ մեր այդ իրաւունքը կը ճանչնայ, սրտին ազնուութեանը կը միացնէ իմաստասէր պատմագետի միտքը, քաղաքական մարդու խորին փորձառութիւն, ինչ որ կը կը հաւաստէ թէ Հայութեան ապագային համար իր յոյսերը գեղեցիկ հոգիի մը թրթռումներուն քաղցրանուշ երածը տութիւնը չեն միայն: Ծածկանունին քօղը վեր առին ու բիշներ, ուրեմն մեզի ալ ներքի է առանց խղճահարութեան համակրանքով ու յարգանքով ողջունել Պ. Վիթօն, իտալական հիւպատոսը Հալէպի, որ 1896ին իբր ներկայացուցիչ իտալիոյ, Աւստրիոյ եւ Գերմանիոյ Ձէյթուն դացած էր միւս հիւպատոսներուն հետ, հաշտութեան պայմաններուն համար:

Խանդավառ բոցով աչքերը լեցուած, Վիթօ խնդրեց իբր զիւցազնական սրբութեան յիշատակ մը գուրգուրանքով իր հայրենիքը պահել թիւրքին գնտակներէն ծակ ծակ զրօշը որ Ձէյթունի սարերէն ամիսներ ամբողջ մարդկութեան սիրաբար արոփել տուաւ: Դեռ վառօղ բուրոյ իրենց արիւնկաթ ձեռքերովը, վերջին համբոյրին հետ, իբր վաւերացում, իրենց անուններն ալ փառքերու վկայ այդ լաթին վրայ գրուածներն, ինչպէս սարերուն գագաթը, այն երիտասարդները որոնք զրահն վազած էին Ձէյթունցիին հետ զրկընդիստն մէկ սիրտ մէկ հոգի կուտելու թշնամիին գէմ:

Իր ազատութեանը համար մարտիրոսացող ժողովրդի մը գալարումներուն ի տես ո՛չ Ֆրանսացին, ո՛չ Անգլիացին կը զգան Իտալացիին սարսուռը: Օտարին կոշկոճիչ թակը անոր գլուխն ալ շատ տանն ճգմած պահեց: «Թէտէք»ին ատկութիւնը գեո չէ մարած, ու շուտ ալ չի մարիր, իտալացիին սրտին մէջ: Չէ՛, Իտալացին ա՛լ չի կրնար մոռնալ

որ Ֆրանց-Եօզէֆ «բարի կայսեր» զինուորները Միլանի ամէն մէկ տան մէջ պատէն կտրիճ իտալացիի մը մարմինը կտնկարէ, մորթէ տեղազերծ, աղիքներէն պարպուած, ու Սան-Ճորճոյի ափերէն գնտակահար Աւրիականը զիւցեցին իտալեան պատանիներու եւ երիտասարդներու զիւսկները: Այդ զիւսկներու սրտականները վրէժինգիբ թափառեցան իտալիոյ մէջ, խոսվեալ սարսուռաց Գեղեցիութեան, Բանաստեղծութեան Մայր-Հայրենիքը, ու օր մը մէջէն զուրս զանտեց «Թէտէք»ն, — Աւստրիացին —: Կարիպալտին եկած էր Քալուրին հետ. քաջութիւն ու խելք ձեռք ձեռքի տուած հայրենասիրութեան մեծ հողանիին տակ:

Կարիպալտի զինուոր մըն էր եւ Վիթօ, եւ հիմա — 1896ին — եթանանումնի պարթեւ ծերունի մը սօրուքը ձիւնափառ, բայց մարմինը միշտ քաջակորույ, հոգին կրակաւ, միտքը զօրեղ, կը պատուիրէր մերկներուն:

— Դուք ալ խելքն ու քաջութիւնը միացուցէք, միշտ հաւատքով աշխատեցէք, ու ապագան ձերն է:

ՀՐԱՋԴԱՆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ե Ր Ե Կ Ո Յ Թ Մ Ը

Բարիզէն կը գրեն մեզ.

«Մարտ 10 ի երեկոյին, զրական ու երածշտական երեկոյթի մէջ զոր Բարիզի հայ ուսանողներու միութիւնը կազմակերպած էր ի նպաստ կարօտ հայ ուսանողներու եւ որուն մասնակցեցան Ֆրանսայի մեծագոյն արուեստագէտները — մասնաւորապէս Մունէ-Սիւլի, Տիկին Սըկոն-Վէպեր, Էնթէլ, — Ռամօ, Օտէոնի թատրոնին բանաստեղծական ցերեկոյթներուն սքանչելի Ռամօն, Չօպանեանի «Օրօր Մայր-Հայաստանին»ը արտասանեց — «Նոր կեանք»ի հրատարակած «Օրօր»ը, զոր հեղինակը ֆրանսերէնի թարգմանած էր —, պոռաց, լացաւ, ապրեցաւ, Հայու մը պէս, մեծ մարդու մը պէս, մեծ արուեստագետի մը պէս: Ահազին տպաւորութիւն առաջ եկաւ: Մունէ-Սիւլի, որ մինչեւ վերջը կեցաւ երեկոյթին՝ զմայլելի համակրանք մը յայտնելով բոլոր Հայերուն, խանդավառութեամբ Ռամօյին վրայ վազեց ու ձեռքերը սեղմեց, ու Չօպանեանին ալ՝ երբ խացաւ որ հեղինակն է: Չօպանեան կ'ըսէր Ռամօյի թէ այն շեշտը որ գրաւ այդ ոտանաւորը ըսելով՝ պիտի չմոռցուի Հայերէն. «Պարոն, պատասխանեց, ես արդէն հոս եկայ իբր մա'րդ եւ ոչ իբր արուեստագէտ. մենք ամենքս ալ պարտք մը սնինք հատուցանելու ձեր գծրազգ ազգին:»

Վահրամ Սվաճեան իր հայկական եղանակներէն չորս հատ զարկաւ, այն անուշ ու ցաւազին եղանակներէն զորոնք ինք կարգադրած է, ու խանդավառ ծափահարութիւններով ընդունուեցաւ: Ինչպէս իր անցեալ ձմրան նուագահանդէսին, այստեղ ալ այդ եղանակները մեծ յաջողութիւն ունեցան:»

« ԿԱՊՈՅՏ ԳԻՐՔԸ »

« Կապոյտ Գիրք »ը կը շարունակէ մեզի համար մնալ Կարմիր գիրքը որուն էջերը մեր արեան ցայաքերովը շառագունած են, ու Սև գիրքը սր մեր աւերակներուն ու կործանումներուն տրտումները կը խտանայ :

Երեք հարիւր էջ կը բովանդակէ վերջին Կապոյտ Գիրքը որ փետրուարին ներկայացուցաւ Անգլիոյ Խորհրդարանին, եւ կ'արձանագրէ 365 հեռագիր ու տեղեկագիր փոխանակուած Անգլիոյ կառավարութեան ու իր ներկայացուցիչներուն միջեւ, ամենքն ալ Ասիական Թիւրքիոյ կացութեանը վերաբերեալ, — այդ 365 պաշտօնագրերուն աւելի քան 300ը միմիայն հայկական գործերուն նուիրուած : 1896 զեկտեմբեր էն մինչեւ 1897 սեպտեմբեր տարածուող ժամանակամիջոց մը կ'ընդգրկեն ատոնք :

Այն անձկութեան զգացումը որով կը սկսինք զրբին ընթերցումը, յոյսի նշոյլով մը չի բարեխանութի՛ր՝ զայն աւարտած ատեն : Խաւարին վրայ պատուհան մըն է որ կը բացուի, ու խաւարին վրայ կը փակուի : Հայաստանի ու Կիլիկիոյ վիճակը, ինչպէս կ'երեւայ Կապոյտ Գրքէն, 1897ի սեպտեմբերին շատ չի տարբերի 1896 զեկտեմբերի կացութենէն :

Ինչ որ անուրանալի է սակայն, այն՝ անգլիական դիւանագիտութեան անդու անվիանդ ջանադրութիւնն է այդ կացութեան բոլոր արհաւիրքը մեղմելու, քանի որ իրեն անկարելի եղած է եւ է չարիքը արմատէն խել : Ամէն օրուան, ամէն ժամու աշաշուրջ հսկողութիւն մըն է ասիկա՝ զոնէ ապրելու նիւթական գործը կարելի դարձնելու համար Հայերուն իրենց հոգին վրայ : Տուրքերու գանձման զեղծումները բանալ, բանտերուն մէջ մաշող խեղճներուն ազատումը ապահովել, վայրագ ու ապիկար պաշտօնատարներու պատժումը կամ զոնէ տեղափոխումը ձեռք բերել, նպաստներու բաշխումը կարգադրել, ջարդերու կրկնութիւնը արդիւնել, բոնի իւրաւացուած այրերուն ու կիներուն՝ Հայութեան գիրկը դանաղը վերացնել, Հայերուն վերադարձնել իրենց յափշտակուած հողերը, սակաւաթիւ արդարաւոր պաշտօնատարները խրախուսել ու ամրացնել իրենց պաշտօնին վրայ, — ահա ինչ եղած է Անգլիոյ դեսպանին ու հիւպատոսներուն ամենօրեայ ճիգը : Յաջողութիւնը միշտ համապատասխանած չէ այս ջանքերուն, բայց կարելի չէ չհաստատել որ եթէ հիմնական բարեփոխութիւն մը առաջ եկած չէ մեր կացութեան մէջ, զոնէ ձեռք բերուած մասնական արդիւնքներուն բազմապատկութեամբ՝ արցունքներ չորցած ու ցաւեր թեթեւցած են սպառն ընդարձակ տարածութեան մը վրայ :

* * *

Կը սկսիմ այժմ ամփոփել Կապոյտ էն գրքին կարեւոր պաշտօնագրերը :

Հ Ո Ւ Ն Ձ Ք Ը

Էնկիւրիի անգլիական հիւպատոսը կը տեղեկագրէ 1896 զեկտեմբեր 19 ին թէ հունձքին առատութեան պատճառաւ — միջինէն շատ վեր — ցորենի եւ գարիի ըն-

դարձակ արտածութիւն մը եղած է Էնկիւրիէն, Կեսարիայէն, Եսոզլատէն, Գրշէհիւրէն ու Չորումէն : Հիւպատոսը ուշադրութիւն կը հրաւիրէ սա կենսական կէտին վրայ թէ Անատոլուի երկաթուղիի ընկերութիւնը պէտք եղածին չափ վախճն չունենալուն, արմախքը շաբաթներով բաց օդին մնացած է, բարեբաղդաբար առանց վնասուելու՝ օդին բացառիկ գեղեցկութեանը պատճառաւ : Վերջէն սակայն ընկերութիւնը կը բացէ ամէն միջոց ձեռք առնել ինչքանքին մեծութեանը համապատասխանելու համար :

ՀԱՄԻՏԻԷ ՀԵՏԵԼԱԶՕՐԲԸ

Սըր Ֆելիք Գըրբի կը հեռագրէ 1896 զեկտեմբեր 30 ին Կ. Պոլսէն մեկնումը Համիտիէ հեծեկազմին, որուն ներկայութիւնը մշտական անհանդստութիւն մըն էր Կ. Պոլսոյ քրիստոնեայ ազգաբնակչութեանց համար : Դեռ պահը 1897 յունուար 11 ին կը հեռագրէ դեսպանատան զինուորական կցորդ գնդապետ Բոնոնուպի տեսակցութիւնը թիւրք պատերազմական նախարարին հետ : Անգլիական սրամատութեան գեղեցիկ օրինակ մըն է ամբողջ հասուածը. « Ն. Վսեմութիւնը բացատրեց թէ Համիտիէ հեծեկազորը Կ. Պոլիս բերելու նպատակը սա էր որ իրենց բնակարանութեան քիւրտական խռանձնախառնութիւնները ընտանենային ու « կակուղնային » մայրաքաղաքին քաղաքակրթիչ ազդեցութեանց հետ շօշափման մէջ մտնելով : » Գիւանագիտական պաշտօնագրի մը մէջ կարելի չէ սովորաբար չար ըլլալ :

ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ

Սըր Ֆելիք Գըրբի առ լորս Սուլպլի, 30 զեկտեմբեր 1896. « Պրիմէի մէջ իւրաւացած Հայերուն նորին քրիստոնէութեան գիրկը դանաղուն վերաբերող հեռագրին մէջ (1896 օգոստոս 13) Պ. Ֆիցմորիս առաջարկած էր որ պատուանշանի կամ աստիճանի բարձրացման ձեւով վարձատրութիւններ արուին գայմագամին, Հաճի Սըպլը Էֆէնտիի, Նէճիկ Էֆէնտիի, Հաճի Չաքէրիա աղայի եւ Բիֆաթ չալուշի, որոնք անձնական մեծ վտանգ աչք առնելով, ջանադիր եղած էին կեանքեր փրկելու Պրիմէիի ջարդին ատեն : Քանիցս ստիպած էի Մեծ Եպարքոսը որ Պ. Ֆիցմորիս թելադրութիւնը իրագործուի, եւ պատիւ սննիմ ծանուցանել ձեր վսեմութեան թէ վարձատրութիւնները այժմ չհորհուած են : Ըստ որում ընկալուցնելը այնտեղ ճանչցուած են իբր Հայոց պաշտպան, ստիկալաւ ու մեծ ազդեցութիւն պիտի ընէ նուազ նպաստաւոր արամազրութիւններ ունեցող Մահմատականներուն վրայ : »

Խարբերդի հիւպատոսը 1896 ապրիլ 6 ին նմանօրինակ վարձատրութիւն մը կը խնդրէ Եսոզլու փաշայի համար, որ հարիւրաւոր կեանքեր փրկած է Պէհլունի, ցոյց տալով թէ պատուանշան մը ինչքան պիտի զօրացնէ անոր օրինակին հետեւելու : Բայց այս թելադրութեան իրականացումը յիշատակուած չէ Կապոյտ գրքին մէջ : Նոյնը կը խնդրուի վանի Մուսա պէյին համար :

ՏՈՒՐԲԵՐՈՒ ԳՆՆՁՈՒՄ

Բազմազի գեր-հիւպատոսը 1896 զեկտեմբեր 6ին մասնանիշ կ'ընէ հայ զիւղացիներուն զլիւսն ծանրացող զըլխաւոր շարիքներէն մին, — տուրքերու գանձուք խանտարմաներու ձեռքով: Այս մասին բարձր հիւպատոսներն ալ համաձայն են, ու ամենքն ալ կ'աշխատին որ թահ-սիլտարները միայն զրկուին զիւղերը, փոխանակ խանտարմաներուն որոնք շարքմաներով գիւղը մնալով գիւղացիներուն երեսէն կ'ապրին խոշտանդելով զանոնք վայրենորէն: Անգլիոյ ներկայացուցիչներուն ըրած զիմումները միշտ արդիւնաւոր չին: Սըր Ֆիլիբ Գըրրի կը խնդրէր Մեծ-Եսպարքստէն որ գտնէ տուրքերու գանձուք յետաձգուի այն զիւղերուն մէջ ուր ջարդ ու թալան պատահած է: Գաւառներուն մէջ ալ հիւպատոսները նոյնը կը պահանջեն կուսակախներէն, որոնցմէ ուսանք կը փութան ալ նոյն մտօք հրամաններ տալ իշխանութեանց: Բայց ամենէն առաջ հիւպատոսներն են տարակուսող այլ հրամաններուն ազդեցութեանը մասին: Ահաւասիկ մէկ քանի թուանշաններ որոնք գաղափար մը կուսան տուրքերուն քանակութեանը վրայ: Խարբերդի մօտ Հողի գիւղէն, որուն 180 հայ տները ամբողջ թալանի արուած են ջարդերուն ատեն, 41,000 զրուշ տուրք կը պահանջեն. Չժշկածագի մօտ Սիսնէ գիւղէն, որուն 35 տները նոյնպէս առանց բացառութեան թալուած են, 8,000 զրուշ. Մամուսա գիւղէն, որուն 51 հայ տները տանիքէն մինչեւ հիւսերը թալուած են, 12,000 զրուշ: Եւ սակայն Հայերը ճարճարակ ըրած ու վճարած են՝ Հողէ 32,000 զրուշ, Սիսնէ 5,000 զրուշ, Մամուսա 8,000 զրուշ, ու մնացեալին համար է միայն որ յետաձգուած կը խնդրեն: Մամուսայի երեսելիները խնդրազրով մը զիմած են Չժշկածագի Չապիթա Մէմուրիին. ահա սոսոր պատասխանը. «Չեր խնդրագիրը Միր-Ալայ պէյին (Գայմագաւը) հաղորդեցի. ահա իր պատասխանը. «Ես ատանի բան չեմ հասկնար. մինչեւ որ զրամը չվճարուի՝ զինուորները գեղէն չպիտի ելլեն»: Հետեւաբար աշխատեցէք ժամ առաջ ճար մը գտնել, զիւղացիներէն զըրամը հաւաքել ու վճարել:» Խարբերդի հիւպատոսը կ'իմացնէ զորձը կուսակալին, որ կը հրամայէ Չժշկածագի պայմագամին ետ կանչել զինուորները ու չնեղել զիւղացիները: Խարբերդի գաշտին մէջ, Դատեմի ու Պէզմիշանի յետեւալ տուրքերն ալ չգանձելու խոտուած կը արուի: Նոյնպէս Վանայ նահանգին մէջ, զինուորական տուրքերը չգանձելու խոտուած: Նոյնը, երկու տարուան համար, Բազմազի:

Չ Ա Ր Դ Ե Ր Ը

Սեբաստիոյ գեր-հիւպատոսը 1896 զեկտեմբեր 15ին կը գրիէ Սեբաստիոյ նահանգին ջարդերուն մանրամասն տեղեկագիրը, ուսից կը տեսնուի թէ նահանգին 22790 հայ տներուն 11,045ը կողոպտուած են ու 3,541 խանութ թալանի արուած, 87 եկեղեցի ու 5 վանք կողոպտուած, 2,027 տուն կրակի արուած կամ քանդուած, 5,263 հայ սպաննուած, 584 կին առեւանդուած և 139 հողի խալամացուած: Եղած վնասը կը հաշուուի 3,819,634 օսմ. սակի: Չարդերուն ատեն սպաննուած թիւրքերուն թիւը 241 կը հաշուէ անգլիական հիւպատոսը:

1896 մարտ 19ին է որ յանկարծ թոքաթի ջարդին լուրը կը պոսթիւայ: Եւրոպական զեւանագիւթեան, մանաւանդ Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին յայտարարութենէն յետոյ թէ ջարդերու թուականը փակուած էր, այս նոր կոտորածին առաջ բերած իրարանցումը սաստիկ կ'ըլլայ: Բարիդի անգլիական զեսպանը կը հեռագրէ մարտ 21ին լորտ Սոլլպէրիի. «Պ. Հանթօ մեծ մտահոգութեան մէջ է Ասիական թիւրքիոյ մէջ խոսիւթեանց վերսկսման հեռապատկերէն, ինչպէս կ'երեւայ Սեբաստիայէն տեղեկագրուած վերջին գէպերէն: Իր կարծիքն է թէ ճշուում գործելու է թէ՛ թիւրքիոյ և թէ՛ Յունաստանի վրայ՝ խաղաղութիւնը պահպանելու համար թէ՛ Եւրոպա և թէ՛ Ասիա. իր կարծիքով նաեւ բարենորոգումներու գործադրութեան մասին սուլթանը ստիպելու է անյատկալ:»

Բայց Սըր Ֆիլիբ Գըրրի աւելի գործօն ու ազդեցիկ է. մարտ 22 ին կը հեռագրէ Սոլլպէրիի. «Իմ առաջին թարգման զրկեցի խօսելու Արտաքին գործերու նախարարին, և Դեսպանները միահաղայն զիտողութիւն պիտի ընեն ընդհուպ. բայց եթէ կ'ուզենք անցեալ տարուան ջարդերուն վերսկսումը արգելել, Պետութիւնները պէտք է բացորոշ ու վերջնական զեկուցում մը ընեն:» Նոյն օրը գարձեալ. «Պ. Պլոքի հրահանգ տուի հետեւեալ զեկուցումը ընել այս առաւ թիւրքիոյ Արտաքին գործերու նախարարին, և, նորին վսեմութեան խնդրանքին վրայ, առաջ գրաւոր մէկ օրինակը ձգուեցաւ իր քով՝ Սուլթանին հաղորդուելու համար. «Եթէ անմիջապէս տնօրինութիւններ ձեռք չառնուին թոքաթի իշխանութիւնները պաշտօնանկ ընելու և այդ սպանութեանց հեղինակները պատմելու համար, ակներեւ պիտի ըլլայ թէ, անցեալ տարուան սպաննութեանց նման, այս սպաննութիւններն ալ Պալատէն թոյլատրուած են: Պարտք պիտի համարեմ այս իմաստով տեղեկագրել կառավարութեան, և զիւրին է երեսակայել թէ այս օրինակ սճիրներու կըրկանութիւնը, արդի պարագաներուն մէջ, ինչ ազդեցութիւն պիտի ունենայ Եւրոպայի Պետութեանց գործողութեան վրայ: Պալատին մեղսակցութեանը մասին ունեցած համոզումն կը հաստատուի ասով որ, հակառակ Սուլթանին խոտուումներուն, Ն. Վեհափառութիւնը բացայայտօրէն որոշած կը թուի իր պաշտօնին վրայ պահել Ասասնայի կուսակալը, որ ամէն ջանք ի գործ կը գնէ կար խոսիւթիւններ առաջ բերելու համար:» Խաղիւց և Ֆրանսայի զեսպաններուն թարգմաններն ալ զիտողութիւններ ըրին: Աստրիոյ զեսպանէն խնդրեցի որ վաղը ի նիստ հրաւիրէ զեսպանները որոշելու համար թէ ինչ պիտողութիւններ ընելու է միահաղայն: Կայսերական իրաւակալ յանձնաժողով մը կազմուեցաւ թոքաթ երթալու և հոն արտասուլօր գատարան մը կազմելու համար: Փորձը ցոյց կուտայ սակայն թէ այս գործողութեան միակ արդիւնքը պիտի ըլլայ նորագոյն հալածանք Քրիստոնեաներուն դէմ: Թոքաթի կառավարիչը և զինուորական հրամանատարը պէտք է անմիջապէս պաշտօնանկ ըլլան, որովհետեւ անհրաժեշտ է որ գտն մը արուի իբր օրինակ ամենուն:»

Լորտ Սուլզպերի պատրաստ կը թուի մինչեւ ծայրը երթալու. բայց կը փափաքի որ նախաձեռնութիւնը ուրիշներէն գայ, մասնաւորապէս Ֆրանսայէն. մարտ 22ին կը հեռագրէ Կ. Պոլսոյ անգլիական զեապանին. «Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը արդէն զօրեղապէս իր կարծիքը յայտնեց ապագայ շարգերու մասին, ու հիմա պիտի ստուգեմ թէ պատրաստ է նախաձեռնութիւնը ստանձնելու Մեծ Պետութեանց կողմէ Դրան ըլլուելիք միահազոյն զեկոյցի մը առաջարկութեան մասին:» Նոյն օրը կը հեռագրէ նաեւ Բարիզի անգլիական զեապանին. «Կ. Պոլսոյ անգլիական զեապանին այսօրուան հեռագրերը, սրտնք ձեզի ալ կրկնուած են, հազորդեցէք Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարին, եւ հարցուցէք նորին վսեմութեան թէ Ֆրանսական կառավարութիւնը տրամադիր է նախաձեռնարկ ըլլալ՝ առաջարկելով հաւաքական խիստ ծանրակշիռ զեկոյց մը Պետութեանց կողմէ, ազգարարելով Դրան թէ ազգեցիկ զգուշութիւններ պէտք է ձեռք առնուին՝ արգիլելու համար այսուհետեւ նմանօրինակ ո եւ է պատահականութիւն, որուն կրկնութիւնը արդի պարագաներուն մէջ ամենաժանր հետեւանքներ կրնայ առաջ բերել Օսմանեան Կայսրութեան համար: Անգլիական կառավարութիւնը ջերմապէս ուժ պիտի ապայսօրինակ առաջարկի մը:»

Բայց Պ. Հանթոնի կորով պակաս է միշտ: Ահա ֆրանսական կառավարութեան պատասխանը զոր Բարիզի զեապանը կը հեռագրէ մարտ 23ին. «Մեծ Պետութեանց մօտ Ֆրանսայի զեապաններուն այս զիշեր հեռագրով զեկուցուեցաւ թէ Պ. Հանթոն հրահանգ տուած է Կ. Պոլսոյ ֆրանսական զեապանին իր պաշտօնակիցներուն հետ խորհրդակցել՝ ձեռք վսեմութեան երէկուան հեռագրին մէջ նշանակուած իմաստով ձեռք առնուելիք անօրինութեանց մասին: Ն. վսեմութիւնը առաջարկած է պահանջել Սեբաստիոյ կուսակալին պաշտօնանկութիւնը:»

Այս ամենուն արդիւնքը յայտնի է. Յանձնաժողովը թոքաթ ուղեւորեցաւ, ու թոքաթի կառավարիչը, ստիկանութեան գովիւէրը եւ ստիկան-զինուորներու գովիւսէրը պաշտօնանկ եղան ու ձերբակալուեցան. այս առաջին անգամն էր որ, ինչպէս գիտել կուտայ Սըր Ֆելիք Գըրրի, Սուլթանը կը հրամայէր շարգերու պատասխանատու իշխանութեանց ձերբակալուիլ: Միեւնոյն ատեն, Ատանայի կուսակալը, որու մասին Անգլիոյ զեապանը սիրելիքն ի վեր գազարած չէ զիտողութիւն ընելէ, իր պաշտօնէն հրաժարեցուցուեցաւ: Մէկ քանի օր յետոյ ալ, Սեբաստիոյ կուսակալը: Նոյնպէս, հոշակաւոր շրջաբերականը զրկուեցաւ նահանգային իշխանութեանց. «Ինչ ինչ նշաններու նայելով, չարամիտ մարդիկ զիտաւորութիւն ունենալ կը թուին ամէն միջոցներով խռովութիւն յարուցանել Կայսրութեան զանազան կողմերը՝ աւելցնելու համար Կայսերական կառավարութեան այս միջոցիս ունեցած նեղ զիրքը Կրեաթի եւ Յունաստանի ինքիւններուն պատճառաւ, եւ այսպէս՝ Եւրոպական Պետութեանց միջամտութիւն մը առաջ բերել: Ի նկատի առնելով պարագաներուն ծանրութիւնը, ո եւ է միջազգայ որ առաջ դայ ե օտար միջամտութեան տեղի տայ, մեծ դժուարութիւններ պիտի յարուցանէ Կայսերական կառավարութեան: Ուստի եւ պէտք է որ

ոչ մէկ վայրկեան մոռնաք արդի կացութեան եւ մեր զիրքին կարեւորութիւնը, ու զիշեր ցերեկ հսկէք որ Միտալ-մաններու ու Բրիտանիաներու միջեւ ո եւ է միջազգայ առիթ տուող զէպք կամ գործ չպատահի:»

Անգլիական զեապանին բոլոր ուշադրութիւնը նուիրուած է այդ միջոցին հայաբնակ կեդրոններու մէջ տիրող կացութեան. Սեբաստիոյ մէջ շարդի երկիւղ կայ, Ակնի մէջ նոր շարդի երկիւղ: Լորտ Սուլզպերի ապրիլ 3 ին կը հեռագրէ Սըր Ֆելիք Գըրրիին. «Բարիզի անգլիական զեապանատունը լուր առնուեցաւ թէ շարդ մը մօտալուտ է Հաճըն:» Ապրիլ 4ին Սըր Ֆելիք Գըրրիի նոյնը կը հեռագրէ Սուլզպերիի՝ Պէհէնիի համար, ու ապրիլ 8ին՝ Երզրատի, Տալուրիկի եւ Կեսարիոյ համար, նոյնպէս Բայասի, Բազէշի, Էրպայայի համար: Ամենուրեք ընդհանուր անհանգստութիւն մը կայ, ու եթէ իրօք եւրոպական ու մասնաւորապէս անգլիական զիւանագիտութեան կը պարտինք ԳՅԻ շարգերուն կրկնութեան, որուն նշանները ամէն կողմէ կը յայտնուին, արգելուիլ, իր այս բացասական բայց այնքան կենսական գործունէութեանը համար շնորհապարտ մնալու ենք իրեն:

Հիւպատոսները կը տեղեկագրեն թէ Կ. Պոլսն գացած հրահանգները իրենց ներգործութիւնը ունեցած են: Իշխանութիւնները ամենուրեք իրենց ազգեցութիւնը բանցուցած են թիւրք երեւելիներուն վրայ, յայտարարութիւններ հանած են, ու գաւառական պաշտօնական թիրթիւրը յորդորներ բազմապատկած են՝ խաղաղութեան պահպանման մասին: Օրինակ մը միայն յիշելով, Բազէշի կուսակալը ձերբակալել կուտայ միտալմաններ որոնց մասին կատակածներ կան թէ շարդ մը պատրաստելու վրայ են:

Պէտք չէ մոռնալ շատ ուշադրաւ զէպք մը որ պատահած է Կէմերէկ, Սեբաստիոյ մօտ, մարտ 4ին: Տաճիկները զիւրին վրայ յարձակած են, քնակիչները շարդելու ու կողոպտելու համար, ու յարձակած են նախ եկեղեցիին վրայ, կրակ ընելով պատարապիչ քահանային ու մամուրներուն վրայ: Բայց Հայերը այնքան ամուր ու արի զիրք ընծած են որ տաճիկները քաշուած գացած են, առանց իրենց զիտաւորութիւնը ի գործ գնել կարենալու: Հայերն երեք հոգի միայն վիրաւորուած են, որոնցմէ մին, կին մը, վերջէն մեռած է ստացած վէրքերէն:

Թոքաթի շարդին մասին տեղեկագիրները հետոյ՝ Եալ կը հասնին լորտ Սուլզպերի. Սեբաստիոյ անգլիական իւպատոսը, որ ռուս հիւպատոսին հետ պետութեանց կողմն պաշտօն ստացած է թոքաթ երթալու եւ քննիչ յանձնաժողովին (արտասովոր զատարան) գործունէութեանը հսկել, իր տեղեկագրին մէջ 91 կը հաշուէ թոքաթի շարդին սպաննուածներուն թիւը, իսկ զիւղերուն մէջ, Պըրքունճիք 12 սպաննուած, Պիրէրէ 16, որոնց երկուքը քահանայ, ահաբի շարչարանքներու տակ, Վառէ՝ 4, Կիւրճի 3:

Արտասովոր պատարանը 115 թիւրք վասեց թոքաթ, որոնց 61ը անպարտ արձակուեցան, 19ը մահուան դատապարտուեցան եւ մնացեալ 45ը մէկէն մինչեւ տասնը հինգ տարուան բանտարկութեան: Սըր Ֆելիք Գըրրիի բոլոր ջանքը կ'ըլլայ որ մահուան պատիժները զործազրուին ու միանգամայն թոքաթի քննիչ յանձնաժողովը Ակն երթալու, 1896 սեպտեմբերի ահաւոր շարդին քննութիւնը կատարելու: Բայց ամիսներով սպասելէ յետոյ, ալ կը յուսահատի: Ռուսական զեապանատան թարգմանին յայտարարած են պալատը թէ Սուլթանը կը խորհի որ

հանրային կարծիքին արդի գրգռելու վիճակին մէջ լաւ չըլլար որ այդ վճիռները զործադրուին. «մանաւանդ որ այնչափ Հայեր որոնք անցեալ տարի վայրագ ոճիրներ զործեցին՝ ներման արժանացան Պետութեանց պահանջման վրայ, եւ Սուլթանը կը մտածէ թէ անարդարութիւն պիտի ըլլար եթէ նոյն զթուփները ցոյց չարուէր թոքաթի միտիւմաններուն համար:» Ասիկա նոր ապացոյց մըն է Սըր Ֆիլիք Գըրրիի համար թէ շարքերը կը պատրաստուին ու կը գործադրուին թիւրք քաղաքային ու զինուորական պաշտօնատարներու կողմէ:

Գաշնակցականներու արշաւանքին տան՝ Շիկակի բերտ աշիւթին վայ, Վանի անգլիական հիւպատոսին ամբողջ ջանքը եղած է շարքի առաջին առնել: Վանի կուսակալ Շէմսի փաշա, որ անգլիական դեսպանին ջանքովն է որ իր պաշտօնին վրայ մնացած է, այն հազուապէս պաշտօնատարներէն մին կը թուի որ իրենց պաշտօնը կ'ըստանայ. հարկեր պահելու կը զրէ օգոստոս 11ին. «Եթէ կ, երեքշաբթի, ամբողջ քաղաքը հանդարտ դառնայ, զրեթէ բոլոր խանութները բաց, եւ ամէն մարդ իր գործին. ասիկա արդիւնք է Շէմսի փաշայի անձնապէս ներշնչած վստահութեան: Կը խնդրեմ ձեր վստահութենէն որ ամէն կարելի աջակցութիւն ընձեռէ անոր, ըստ որում գիտեմ իր կացութեան դժուարութիւնները: Շէմսի փաշան կանչեց Մահմէտականները եւ ազգաբարեց որ զինուորներուն գործն էր յեղափոխականներուն հետ գործ ունենալ եթէ դային: Ըսաւ որ եթէ խռովութիւն մը պատահի, թնդանոթ պիտի գործածէ: Հայերուն ալ ազգաբարեց զոտշանալ յեղափոխականներուն օգնելէ կամ զանոնք պահելէ, եթէ ոչ ամենածանր հետեւանքներ կրնան առաջ գալ:»

Մէկ քանի բերտ ցեղապետներու սեղափոխութիւն (ինչպէս չորս բերտ երեւելի՝ Բալուի գիւղերէն), մէկ քանի դայմագամներու պաշտօնանկութիւն, կէմէրէի վրայ յարձակող ու կրակ ընող թիւրքերէն մէկ քանիին դատաւարութիւնը, Էլիսի շարքերուն պատասխանատու մէկ քանի պաշտօնատարներու հեռացումը, — արդիւնք են թէ՛ անգլիական դեսպանին եւ թէ՛ հիւպատոսներուն անընդհատ դիմումներուն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՌԱՅՈՒՄԸ

Անգլիական դեսպանին զլուստը ջանքերէն մին եղած է որ 1896 զեկտեմբեր 24ին հրատարակուած ընդհանուր ներումը քաղաքական բանտարկեալներուն համար՝ ճշգրտօրէն գործադրուի ամենուրեք: Առաջին անգամ ուսական դեսպան Պ. Նէլիտօֆ 1897 յունուար 6ին դեսպանական դամարման մը մէջ ուշադրութիւն կը հրաւիրէ այս կէտին վրայ թէ մոռացումը չի գործադրուիր այնպէս ինչպէս յայտարարուած է, եւ վեց պետութիւնները գիտողութիւն կ'ընեն այս մասին Գրան: Ու յետոյ մինչեւ երեք չորս ամիս Սըր Ֆիլիք Գըրրի աշաւորջ հոգածութեամբ մը իր բոլոր հիւպատոսներուն ձեռքով ազատել կուտայ ամենէն հեռուոր անկիւններն անգամ մոռցուած քաղաքական բանտարկեալները:

Կ Ր Օ Ն Ա Փ Ո Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Բանի իսլամացուած Հայերուն թոյլ տալ որ բրիտանականութեան զիրիք դառնան, Անգլիոյ ներկայացուցիչներուն զլուստը ջանքերէն մին եղած է: Գիտենք որ եթէ Պիրէմիի հայերը կրցան Հայութեան դառնալ, Անգլիոյ ջանքերուն շնորհիւն էր: Խարբերդի հիւպատոսը 1898 զեկտեմբեր 28ին կը հեռագրէ թէ յաջողած է կուսակալին միջոցաւ գտնել տալ երեք հայ ազգիկ որոնք թիւրքերու մօտ կը գտնուէին Մալաթիա, եւ Սեբաստիա՞ զրիկէ: Ասոնցմէ մին սակայն յայտարարած է թէ կ'ուզէ իսլամ մնալ:

Տիարպէքիի հիւպատոսը կը սեղեկագրէ 97 մարտ 16ին Ճոպաղջուրի գաւառակին մէջ իսլամացուած 40-50 առն հայերու մասին: Հակառակ հիւպատոսին յարգանքուն, հակառակ Կինճի զիւղերէն մէկուն բերտ աղային յայտարարութեանը թէ կրնան աներկիւզ բրիտանականութեան դառնալ, հայ զեղացիները կը շարունակին իսլամ մնալ. «Պարզապէս ըսին թէ, անգամ մը իսլամ դարձած ըլլալով, չէր արժեք նորէն կրօնք փոխել: Անշուշտ ամէն պատճառ ունին մնալու այնպէս ինչպէս են, եւ եթէ դո՛ւ են իրենց նոր կրօնքէն, գործին էն պարզ ու էն գործնական լուծումն է ասիկա: Ըստ երեւութի՛ն՝ ցեղի տարբերութիւն չի կայ, եւ մահմետական ու բրիտանական նոյն լեզուն կը խօսին, «Չազար», պարսկերէնէն սերած գաւառաբարբառ մը: Աղային խօսքովը, «Եթէ միտիւման մնան, եղբայր ենք. եթէ բրիտանական դառնան, գրացի ենք:» Իրենց նախկին կրօնքին դառնալու դժուարութիւններէն մին զինուորական տուրքի ինչպիսին է: Յարմէ հետեւ իսլամութիւնը ընդունած են, այդ տուրքը վճարած չեն. ու կը վախնան որ եթէ բրիտանական ճանչցուին նորէն, յետեւալ տուրքերը պիտի պահանջուին իրենցմէ: Եթէ ինչպիսին ինքն իր վիճակին ձգենք, կարծեմ պիտի վերջանայ՝ մեծամասնութեան իսլամ մնալովը:» Հիւպատոսը պիտի աշխատի որ բրիտանականութեան դարձող հայերը պաշտպանուին:

Բաղէշի հիւպատոսը կը սեղեկագրէ 1897 մայիսին թէ 1895ի ձմրան բանի կրօնափոխութիւններ պատահեցան Բաղէշ, Սղերդ եւ Կինճ: «Բաղէշ քաղաքին մէջ երկու երեք հոգի միայն իսլամութիւն ընդունեցին, ու այնպէս կը մնան: Խիզանի գաղային մէջ քսան զիւղ իսլամ դարձան. բայց մուլաները այդ զիւղերէն ելան գացին 1896ի սկիզբը, ու մզկիթ չի կայ հոն: Գիւղացիները սակայն հիմա անկարող են բրիտանական կրօնքը գործադրելու իրենց զիւղերուն մէջ: Անոնցմէ ոչ մին իբր իսլամ ճանչցուած է կառավարութենէն: Երբոր Բաղէշ կուզան, բացէիւրաց հայ անուններ կը կրեն ու իբր հայ կը պտըտին: Իրենց զիւղը, սակայն, Քիւրտերէն վախուն, Քրիստոնէութիւն չէն գաւանդի: Բայց իրենք իսկ կ'ըսեն թէ Խիզանի գաղմագամ զիրենք կը հրաւիրէ բրիտանականութիւն դաւանել աներկիւզ: Այս քսան զիւղերուն բնակիչներուն շատը շրջակայ գաղանքը գաղթած են, ուր արձակ համարձակ բրիտանականութիւն կը գաւանդին:

Սղերդ քաղաքին մէջ այն սակաւթիւ հայերը սրտնք իսլամ եղան, քրիստոնէութեան դարձած են եւ իրենց կրօնքը կը պաշտեն աներկիւզ :

Շիրվանի գաղափէ կը տեղեկանամ թէ շատ Յակոբիկեաններ ու Հայեր իսլամութիւն ընդունած են ահաւոր սարսափի ազդեցութեան տակ : Բայց չիմացայ ու եւ պարագայ ուր թիւրք իշխանութիւնները զանոնք ճանչցած ըլլան իբր իսլամ : Ընդհակառակն, եղած են պարագոյններ ուր Սղերդի տեղական իշխանութիւնը փախտաւանները իրենց դիւզերը զրկած է՝ քրիստոնեայ մնալու հրամանով : Քիւրտները սակայն, սրտնք ստուար մեծամասնութիւն կը կողմեն Շիրվան, մինչեւ հիմա սարսափահար կը պահեն ժողովուրդը, այնպէս որ ասոնք անկարող են բացելիբաց եկեղեցի երթալու, եւ շատը դեռ իսլամ կը մնան :

Կարգանի գաղափին մէջ, Կիւլեմասեանի մէկ քանի աները միայն դեռ իսլամ կը մնան, իսկ գաղափին մնացեալ Հայերը քրիստոնէութեան դարձած են :

Արօ գաղափին բնակիչները գրեթէ բնաւ Բաղէշ չեն գար, սրովհետեւ արաբախօս հեռաւոր գաղա մըն է աս, բայց կ'իմանամ թէ խոշոր գիւղ մը (Տեհ) եւ փոքր գիւղ մը դեռ իսլամ կը մնան :»

Հալապի հիւպատոսը խոստում կ'անէ կուսակալէն 1897 մայիսին թէ Մարաշէն, Ուրֆայէն, Այնթապէն ու Պիրեճիքէն 100ի չափ հայ փախտաւան, սրտնք շարքերուն տանն իսլամ եղած են, իրենց տեղերը դարձուած ասան ու եւ կ'երպով չպիտի նեղուին :

« Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը »

« Կապոյտ Գիրք »ը, որ հայկական գործերու ամենա յետին մանրամասնութիւններով կը զբաղի, հազիւ մէկ քանի տողով յիշատակութիւնը կ'ընէ օգոստոս 18ին Կ. Պոլիս Գաշնակցականներու կատարած ուրաճութեան փորձերուն, կատարելապէս աննշան նկատելով զանոնք : Ընդհակառակը, Վանի հիւպատոսարանին տեղեկագիրնեւրուն մէջ սահմանադրին վրայ գործող Գաշնակցականներուն վրայ կը խօսուի յաճախ, այնպիսի կերպով մը սակայն որ բոլոր Հայերու ուշադրութիւնը գրաւելու արժանի է : « Այդ մարդիկը հայրենասէրներ չեն, կը գոչէ հազարապետ Ուիլիըմս, իրենց անձնական օգտին համար կ'ոգորին, ու բնաւ հոգեւորն չեն ընել իրենց գերագոյ հայրենակիցներուն տառապանքը :» Ու ասիկա էն թեթեւ արտայայտութիւնն է անոնց գործունէութեան մասին անպիտան պաշտօնատարներուն կողմած համակամար : Չենք ուզեր աւելի ծանրանալ :

* * *

Ահաւասիկ վերջին Կրօնայտ Գիրքին մէկ համառօտ ամփոփումը : Ուրախ բան մը չիկայ հոն արձանագրելիք : Այս աշխատութիւնը վերջացնենք սակայն Վանի անպիտան հիւպատոս հարիւրապետ Էլիըզի (յաջորդ հազարապետ Ուիլիըմսի) մէկ քանի խօսքերովը, որոնք իր 1897 սեպտեմբեր 1ի տեղեկագրին վերջաբանը կը կազմեն : Այդ տեղեկագիրը կը յայտնէ թէ յաջողած է համոզել Վան եւ կամ մէկ քանի հայ յեղափոխականներ որ, ի սկի իրենց

ազգակիցներուն, ելլեն երթան Վանէն : Ապա, իր բոլոր ուժովը բողոքելէ յետոյ Գ. զօրաբանակին հրամանատար տիրահաշակ Միւշիւր Չէքի փաշային գեմ, որ, Քիւրտերուն վրայ տարածած պաշտպանութեամբը, զլիաւոր արգելքն է Հայաստանի մէջ խաղաղութեան վերահաստատման, Պ. Էլիըզ կ'երգակացնէ. « Ճողովուրդը կը շարունակէ Շէմսի փաշայի ներկայութիւնը նկատել իբր ապահովութեան երաշխաւորութիւն մը : Պ. Ալլէն սքանչելի գործ կը կատարէ արջառ գնելով ու բաժնելով գիւղացիներուն, երբեմն ալ սերմնացու : Մէկ երկու քաւառակի մէջ, փախտաւանները իրենց տեղը կը դառնան, իմանալով որ նպաստ կը բաշխուի : Եթէ լաւագոյն օրեր գան, անոնք որ այս ժողովուրդը կը ճանչնան՝ կ'ըսեն ինձի թէ անոնց մէջ շատը իրենց լքած գեղերը պիտի դառնան : Քաւառակներուն մէջ ապահովութեան զգացման նորագոյն ապացոյց մըն ալ ու է թէ վերջին օրերս գիւղացիներ եկան ու արջառ ուզեցին : Եթէ Միւշիւրը յազմանակէ, այս բաղձալի կացութիւնը պիտի դադրի, եւ ժողովուրդը նորէն պիտի իրի թշուառութեան մէջ ուսկից ելլելու վրայ է : Իրենց ամէն թերութիւններով, արգարութիւն է յիշել թէ այդ թերութիւնները ճնշման արգասիքն են. այս մարդիկը աներեւակայելի կերպով ժուժկալ ու ժրջան են, եւ անոցորդ գերազուցեանց գեմ շարքաշուութեան այնպիսի ոյժ մը ցոյց տուին որ պարզապէս հիանալի է : Քաշութիւն այլ մանաւանդ խելացութիւն չի պակսիր իրենց : Լաւ կառավարութեան տակ՝ կրնան ընտիր քաղաքացիներ ըլլալ, ու զօրութեան ազդիւր մը՝ իրենց պետութեան համար :»

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՑԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգիրն զրկել առ
L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամեայ Տ ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամեայ 1 աւալար :
Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15 ին :
Արեւելքի համար (Պուլկարիա, Ռումանիա, Յուստանիա եւ այլն) կը ինչպիսի սոկի ֆրանքով հաշուել բաժնեգիրն :

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԱՌՁԻՆ, ԵՐԿՐՈՐԻ ԵՎ ԵՐՐՈՐԻ թիւերը ՄՊԱՌՄԾ ըլլալով մեր ժօտ, կը ինչպիսի անոնցմէ սրտնք այդ թիւերն ունին և « Նոր Կեանք » ի հաւաքածոյ կազմելու մտազիր չեն, հաճել մեզ զրկել զանոնք : Իրական ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան մեզի ատով : Այդ թիւերուն փոխարէնը կը հաշուենք իրենց բաժանորդագրութեան վրայ, զրկուած իւրաքանչիւր թիւի փոխարէն երկու թիւ :

ՄԱՐԵՐԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԷՆ կը խնդրենք որ իրենց բաժնեգիրն մընի—օրաբարով զրկեն մեզ, փոխառակ թղթագրամ—տողարի : Մընի—օրաբարները պէտք է զբոհել Լ. Չարթի անուն, մեզի որոշակի յայտնելով զրկուին անունը :